ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-785-25.11.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի թիվ ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել նոր՝ 3-րդ կետ.
«3) հակակոռուպցիոն դատարանը:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս.
«3. Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով հակակոռուպցիոն դատարանների իրավասությանը վերապահված գործերը, ինչպես նաև քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (այսուհետ՝ նաև հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր):»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս.
«3. Հակակոռուպցիոն դատարանը գործում է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-

ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ:»:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 1-ին կետում «16» թիվը փոխարինել «22» թվով:
2) 2-րդ կետում «18» թիվը փոխարինել «24» թվով:

Հոդված 6. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին հոդված.

«Հոդված 28.1. Վերաքննիչ դատարաններում հակակոռուպցիոն գործերի քննությունը

1. Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը վերանայում են Վերաքննիչ քրեական դատարանի առնվազն 6 թվակազմով առանձին դատավորները:

2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը վերանայում են Վերաքննիչ քաղաքացիական դատարանի առնվազն 6 թվակազմով առանձին դատավորները:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավորները, ի լրումն նույն մասով նախատեսված գործերի, վերանայում են նաև սույն օրենսգրքով Վերաքննիչ քրեական դատարանին վերապահված այլ գործեր:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավորները, ի լրումն նույն մասով նախատեսված գործերի, վերանայում են նաև սույն օրենսգրքով Վերաքննիչ քաղաքացիական դատարանին վերապահված այլ գործեր:

Հոդված 7. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) քրեական պալատը՝ 8 դատավորի թվակազմով.»:

Հոդված 8. Օրենքի 43-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2.1-ին մասով.

«2.1. Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվում են միայն Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում

հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի վերանայման գործերը՝ միայն Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև:»:

Հոդված 9. Օրենքի 45-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2.1-ին մասով.
«2.1.Սույն օրենսգրքի 43-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դատավորների համար Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ:»:

Հոդված 10. Օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր» բառերը:

Հոդված 11. Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 44.1-րդ կետ.
«44.1) դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների մասնակցության անհրաժեշտության դեպքում սահմանում է փորձագետների ներգրավման կարգը և նրանց ներկայացվող պահանջները.»:

Հոդված 12. Օրենքի 95-րդ հոդվածում՝
1) 1-ին մասում՝
ա. «և վարչական» բառերը փոխարինել «, վարչական և հակակոռուպցիոն» բառերով.
բ. լրացնել նոր նախադասություն.
«Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ներառվում են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինները:».
2) 2-րդ և 3-րդ մասերում «վարչական մասնագիտացման բաժնում» բառերը փոխարինել «վարչական և հակակոռուպցիոն մասնագիտացման բաժիններում» բառերով:

Հոդված 13. Օրենքի 103-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝ «կամ վարչական» բառերը փոխարինել «, վարչական կամ հակակոռուպցիոն» բառերով.

2) լրացնել նոր 3.1-ին մաս.

«3.1. Հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներ մշակելիս կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացման հիմնահարցերը ներառվում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի, իսկ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում:»:

Հոդված 14. Օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասում «ցուցակ» բառից հետո լրացնել «իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ,» բառերով:

Հոդված 15. Օրենքի 112-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1-ին և 1.2-րդ մասեր.

«1.1. Հակակոռուպցիոն դատարանի դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

1) որի վրա տարածվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները.

2) որը, լինելով դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան կամ նախկին դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված սահմանափակումները տարածվում են նաև Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների թեկնածուների նկատմամբ:»:

Հոդված 16. Օրենքի 115-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին, 3-րդ և 5-րդ կետերում «տարիքով ավագ» բառերը փոխարինել «առավել երկար փորձառություն ունեցող» բառերով.

2) 2-րդ կետում «տարիքով ավագին» բառերը փոխարինել «առավել երկար փորձառություն ունեցող դատավորին» բառերով.

3) 4-րդ կետում «տարիքով ավագին» բառերը փոխարինել «առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին» բառերով:

Հոդված 17. Օրենքի 132-րդ հոդվածում լրացնել նոր՝ 4.1-ին մաս.

«4.1. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված անձը դիմումին կցում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը:»:

Հոդված 18. Օրենքի 133-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Դիմումներ ընդունելու ժամկետի ավարտից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Բարձրագույն դատական խորհուրդը՝ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է թեկնածուի անձնական գործը, իսկ դատավոր չհանդիսացող թեկնածուի դեպքում՝ նրա ներկայացրած և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը, այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց զրույցի:».

2) 2-րդ մասում «որակները,» բառից հետո լրացնել «թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը,» բառերը:

Հոդված 19. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների թվակազմն ավելացնելու համաձայնություն ստանալու համար դիմում է Կառավարություն՝

1) հակակոռուպցիոն դատարանում՝ տասնհինգ դատավորով.

2) վերաքննիչ քրեական դատարանում՝ վեց դատավորով.

3) վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ վեց դատավորով.

4) վճռաբեկ դատարանի քրեական պալատում՝ երկու դատավորով:

3. Կառավարության համաձայնությունը հնգօրյա ժամկետում ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը ավելացնում է դատավորների թվակազմը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է Հակակոռուպցիոն դատարանի նստավայրերը և դրանց սպասարկման տարածքը, հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի բաշխումն ու թվակազմը:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման, Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման անհրաժեշտության և իրականացման կարգի մասին՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրումն իրականացվում է Օրենսգրքի ընդհանուր կանոններով: Սույն մասով նախատեսված որոշմամբ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է նաև թեկնածուների ցուցակի համալրման, այդ թվում՝ որակավորման ստուգման առանձին փուլերի և դրանց

շրջանակներում իրականացվող գործողությունների հատուկ ժամկետներ՝ այն հաշվառմամբ, որ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգումը, ուսուցումը և դատավորների թեկնածուների ցուցակի հաստատումն իրականացվի դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ առավելագույնը հնգամսյա ժամկետում:

6 . Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում և հրապարակում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը (որը չի կարող պակաս լինել ընդհանուր միավորների 60 տոկոսից): Որակավորման գրավոր քննության կազմակերպումն իրականացվում է Օրենքի 100-րդ հոդվածով սահմանված կարգով:

7 . Հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմի համալրումն իրականացվում է օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

8 . Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակում ընգրկվելու համար դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման՝ Արդարադատության ակադեմիան ավարտած բարեվարքության ուսումնասիրություն չանցած թեկնածուները, վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանների համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորները, առաջին ատյանի դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորները հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելու համար ներկայացնում են դիմում՝ կցելով միայն Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերալ հարցաթերթիկը, որը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Սույն մասով նախատեսված անձինք սույն հոդվածով սահմանված կարգով հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների հետ մասնակցում են հարցազրույցների:

9 . Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի

վերանայումն իրականացնող դատավոր և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար ներկայացվող դիմումին կցվում է Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերալ հարցաթերթիկը, որը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի արտահերթ առաջին համալրման նպատակով սույն հոդվածով սահմանված կարգով անցկացվում են հարցազրույցներ:

1 0 . Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման կարգը՝ սույն հոդվածի 11-15-րդ մասերով սահմանված կարգին համապատասխան: Հակակոռուպցիոն դատարանի և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների առաջխաղացման ենթակա համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման նպատակով հարցազրույց անցկացնելու օրվան նախորդող տասն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան հարցազրույցից հինգ օր առաջ Դատական Դեպարտամենտը կազմակերպում է հավակնորդների նախնական հարցազրույցը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ներգրավված փորձագետների հետ:

1 1 . Որպես փորձագետ կարող են ընտրվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ: Փորձագետներից մեկը պետք է լինի ազգային փորձագետ, իսկ երկուսը՝ առաջադրվեն վերջին երկու տարում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի

Հանրապետության հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կամ միավորումների կողմից: Ազգային փորձագետի վարձատրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, իսկ Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կամ միավորումների կողմից առաջադրած փորձագետներինը՝ տվյալ կազմակերպությունների կամ միավորումների կողմից:

1 2 . Բարձրագույն դատական խորհուրդը նախնական հարցազրույցից հինգ օր առաջ փորձագետներին է տրամադրում հավակնորդների անձնական գործը, որում պետք է ներառվեն որակավորման ստուգմանը մասնակցելու հայտին կից հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը, գրավոր քննության արդյունքով ստացած միավորները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը և Օրենսգրքի 107-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները:

1 3 . Նախնական հարցազրույցի նպատակը փորձագետների կողմից հավակնորդի դատավոր դառնալու շարժառիթի ու ակնկալիքի, անձնական հատկանիշների (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ), դատավորի վարքագծի կանոններին, շահերի բախմանը վերաբերող իրավիճակում ձեռնարկվելիք գործողությունների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների առնչությամբ հարցեր տալու միջոցով հավակնորդի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդին կարծիքի տրամադրումն է:

1 4 . Փորձագետները նախնական հարցազրույցի արդյունքում կազմում և հարցազրույցից առնվազն երկու օր առաջ Բարձրագույն դատական խորհուրդ են ներկայացնում հավակնորդի վերաբերյալ գրավոր խորհրդատվական կարծիք:

1 5 . Փորձագետները պարտավորվում են չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել հավակնորդների վերաբերյալ իրենց հայտնի դարձած հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները:

1 6 . Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների առաջխաղացման ենթակա համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու համար

քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում նաև փորձագետների ներկայացրած գրավոր խորհրդատվական կարծիքը:

17. Սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցումը և փորձաշրջանն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով և Ակադեմիայի կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված կարգով՝ երկամսյա ժամկետում:

18. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, հակակոռուպցիոն դատարանի դատավորի, ինչպես նաև Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների թափուր պաշտոնների համալրումն իրականացվում է սույն հոդվածի 16-րդ մասով սահմանված դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուներից, իսկ ցուցակը սպառվելու դեպքում՝ Օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

19. Հակակոռուպցիոն դատարանն սկսում է գործել կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ յոթ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ երեք դատավորների նշանակման պահից:

20. Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները այդ պաշտոնում պաշտոնավարումն սկսում են սույն հոդվածով սահմանված կարգով չորսական առանձին դատավորներ նշանակվելու պահից:

21. Սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված ժամկետից հետո մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը ընդունում է որոշում գործերի վերաբաշխման մասին:

22. Սույն հոդվածի 19-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի

բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվում են բացառապես հակակոռուպցիոն դատարանի կողմից:

2 3 . Սույն հոդվածի 20-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են Հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:

2 4 . Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ:

Սույն հոդվածի 20-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո Հակակոռուպցիոն դատարանի կայացրած կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ դատական ակտերի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կայացրած դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներն սկսում են քննել Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները, իսկ Հակակոռուպցիոն դատարանի կայացրած հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կայացրած դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները սկսում են քննել Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

Կոռուպցիայի դեմ արդյունավետ և անզիջում պայքարը մշտապես հանդիսացել է ժողովրդավարական և իրավական պետությունների առաջնային խնդիրներից մեկը: Ընդ որում, շատ հաճախ անհամաչափ մեծ ուշադրություն է դարձվել կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների քննության և այդ քննության նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացմանը (կոռուպցիոն հանցագործություններ քննող մասնագիտացված քննչական մարմիններ և քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող և դատարաններում մեղադրանք պաշտպանող հատուկ դատախազներ նախատեսելու միջոցով)՝ առանց բավարար ուշադրություն դարձնելու կոռուպցիոն բնույթի գործերով արդարադատություն իրականացնող մարմնին՝ դատարանին ներկայացվող հատուկ պահանջներ նախատեսելուն՝ ելնելով կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների բարդությունից և հանրային բարձր վտանգավորությունից:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշմամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) առանձնահատուկ կարևորվել է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի էական փոփոխությունը: Միաժամանակ Ռազմավարությամբ սահմանվում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի կայացման և շարունակական զարգացման տեսանկյունից կարևորվում է նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծումը, որոնք պետք է օգտվեն բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներից, ինչը կհանգեցնի մասնագիտացված դատավորների կողմից գործերի առավել որակյալ, բազմակողմանի և արդյունավետ լուծմանը: Ակնհայտ է, որ կոռուպցիոն բնույթի գործերով մասնագիտացված քննությունը նոր հարթակի վրա կարող է բարձրացնել կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի արդյունավետության աստիճանը՝ խթանելով դրա զարգացումը:

Ներկայումս տարբեր պետությունների իրավական համակարգերին բնորոշ դատական մասնագիտացման տենդենցը իր արտացոլումն է գտնում նաև

հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում՝ մասնավորապես մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու տեսքով, որոնք կոչված են արդարադատություն իրականացնելու կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների գործերով: Այս պահի դրությամբ աշխարհի մի շարք պետություններում արդեն իսկ գործում են մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ՝ Աֆղանստան[1], Բանգլադեշ[2], Բոտսվանա [3], Բուլղարիա[4], Բուրունդի[5], Կամերուն[6], Խորվաթիա[7], Ինդոնեզիա[8], Քենիա[9], Մալայզիա[10], Մադագասկար[11], Մեքսիկա[12], Շրի Լանկա [13], Նեպալ[14], Պակիստան[15], Պաղեստին[16],

---

[1] Տե՛ս Աֆղանստան, *Աֆղանստանի Նախագահի «Հակակոռուպցիոն դատական կենտրոն ստեղծելու մասին» որոշում*, 2006թ., https://www.u4.no/assets/afghanistan-presidential-decree-establishing-anti-corruption-justice-center-2016-english-pdf

[2] Տե՛ս Բանգլադեշ, *Հակակոռուպցիոն Հանձնաժողովի մասին ակտ* (չնայած այն հանգամանքին , որ իրավական հիմքը Հակակոռուպցիոն Հանձնաժողովի մասին ակտն է, դրանով հիմք է դրվել նաեւ Հակակոռուպցիոն մասնագիտացված դատաքննության), 2004թ. https://www.u4.no/assets/bangladesh-anti-corruption-commission-act-2004-english-translation.pdf

[3] Տե՛ս Բոտսվանա, *Կոռուպցիոն եւ տնտեսական հանցագործությունների ակտ, 2013թ.* , https://www.u4.no/assets/botswana-corruption-and-economic-crimes-act-2013-english.pdf

[4] Տե՛ս Բուլղարիա, *Քրեական դատավարության օրենսգիրք*, 2012թ, https://www.u4.no/assets/bulgaria-penal-procedure-code-2012-english-translation.pdf

[5] Տե՛ս Բուրունդի, *Հակակոռուպցիոն դատարանների ստեղծման մասին օրենք N 1/36*, 2006թ., http://www.assemblee.bi/IMG/pdf/loi_n1-36_du_13_decembre_2006-2.pdf, http://www.assemblee.bi/IMG/pdf/n%C2%B01_12_18_avril_2006.pdf

[6] Տե՛ս Կամերուն, *Հատուկ քրեական դատարան ստեղծելու մասին օրենք*, 2011թ., https://www.u4.no/assets/cameroon-special-criminal-court-law-no.-2012-011-english-translation.docx

[7] Տե՛ս Խորվաթիա, *Դատարանների ակտ*, 2010թ., https://www.u4.no/assets/croatia-courts-act-2010-english-translation.docx

[8] Տե՛ս Ինդոնեզիա, *Կոռուպցիոն հանցագործությունների դատարանի մասին օրենք N* 46, 2009թ.

[9] Տե՛ս Քենիա, *Հակակոռուպցիոն եւ տնտեսական հանցագործությունների ակտ,* 2003թ., https://www.u4.no/assets/kenya-anti-corruption-court-legislation-2003-english.docx, http://kenyalaw.org/kl/index.php?id=5908

[10] Տե՛ս Մալայզիա, *Հակակոռուպցիոն հանձնաժողովի մասին ակտ*, 2009թ., Աստիճանակարգված դատարանների ակտ, 1948 թ. /դատարանը ստեղծվել է 2011թ. փոփոխության արդյունքում, https://www.u4.no/assets/malaysia-subordinate-courts-act-1948, https://www.u4.no/assets/malaysian-anti-corruption-commission-act-2009

[11] Տե՛ս Մադագասկար, *Հակակոռուպցիոն դատարանների մասին N 021 օրենք*, 2016թ., http://www.assemblee-nationale.mg/wp-content/uploads/2016/07/Loi-n%C2%B02016-021_fr.pdf

[12] Տե՛ս Մեքսիկա, *Սահմանադրական փոփոխություններ,* հոդված113, 2015 թ., https://www.u4.no/assets/mexican-constitution-with-amendments-2015-english-translation.pdf

[13] Տե՛ս Շրի Լանկա, *Դատական ակտում փոփոխություններ N 9,* 2018թ., https://www.u4.no/assets/sri-lanka,-judicature-(amendment)-act,-no.-9-of-2018

[14] Տե՛ս Նեպալ, *Հատուկ դատարանի մասին ակտ*, 2002թ. https://www.u4.no/assets/nepal-special-court-act-2002-english.pdf

[15] Տե՛ս Պակիստան, Ազգային հաշվետվողականության Բյուրոյի մասին որոշում, 1999թ., https://www.u4.no/assets/pakistan-nab-ordinance-1999-english.pdf

[16] Տե՛ս Պաղեստին, *Հակակոռուպցիոն օրենք*, 2010 թ., https://www.u4.no/assets/palestine-anti-corruption-law-2010-english-translation.pdf

Ֆիլիպիններ[17], Սենեգալ[18], Սլովակիա[19], Ուկրաինա[20], Ուգանդա[21], Տանզանիա [22], Թաիլանդ[23] եւ այլն:

Մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու հիմնական փաստարկները հանգում են նրան, որ մասնագիտացված դատարանները բարձրացնում են գործերի քննության արդյունավետությունը՝ հստակ որոշված ընթացակարգի միջոցով, ինչպես նաև նպաստում են առավել բարձրորակ և հաստատուն դատական պրակտիկայի ձևավորմանը իրավունքի առանձին ոլորտներում: Ըստ այդմ, առանձնացվում են մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու հետևյալ երեք փաստարկները՝ *արդյունավետություն, ամբողջականություն և մասնագիտացվածություն:* Այժմ անդրադառնանք այս փաստարկներից յուրաքանչյուրին.

արդյունավետություն - Մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու անհրաժեշտության առաջնային գործոնը հանդիսանում է նմանատիպ դատարանների միջոցով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների գործերով արդարադատության որակի բարձրացումը: Մասնավորապես, զարգացող կամ անցումային փուլերում գտնվող պետությունների արդարադատության համակարգերում շատ հաճախ գործերի քննությունը ձգձգվում է տարբեր պատճառներով: Ընդ որում, նման իրավիճակը, նվազեցնելով հանրային վստահությունը դատական համակարգի նկատմամբ, առավել անցանկալի իրավիճակ կարող է ստեղծել հատկապես կոռուպցիոն գործերով: Մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարում պետության իրավապահ համակարգի հետևողականությունը նշանակում է, որ արդարադատության իրականացման գործընթացում անընդհատ ձգձգումները կարող են կասկածի տակ դնել

---

[17] Տե՛ս Ֆիլիպիններ, *Սահմանադրություն*, 1973 թ., հոդված 13, մաս 5, http://www.officialgazette.gov.ph/constitutions/1973-constitution-of-the-republic-of-the-philippines-2/

[18] Տե՛ս Սենեգալ, *Ապօրինի հարստացման գործերով դատարան ստեղծելու մասին օրենք N 81-54*, 1981թ., գործարկվել է 2012թ., https://www.u4.no/assets/senegal-anti-corruption-law-2012-original.pdf

[19] Տե՛ս Սլովակիա, *Մասնագիտացված քրեական դատարանի մասին օրենք N 291*, 2009թ., https://www.u4.no/assets/slovakia-specialised-criminal-court-law-law-no.-291-2009-2009-slovakian-original.pdf

[20] Տե՛ս Ուկրաինա, *Բարձր հակակոռուպցիոն դատարանի մասին օրենք,* 2018թ., https://www.u4.no/assets/ukraine-anti-corruption-court-law

[21] Տե՛ս Ուգանդա, Հակակոռուպցիոն դատարանը ստեղծվել է որպես Բարձրագույն դատարանի մաս, 2008թ.

[22] Տե՛ս Տանզանիա, *Տնտեսական եւ կազմակերպված հանցագործությունների հսկողության ակտ*, 2016թ., https://www.u4.no/assets/tanzania-economic-and-organised-crime-control-rules-2016-english.pdf

[23] Տե՛ս Թաիլանդ, Կոռուպցիոն եւ չարաշահումների գործերով քրեական դատարա նստեղծելու մասին կառավարության որոշում N 2559, 2016թ. https://www.u4.no/assets/thailand-procedures-for-corruption-and-malfeasance-cases-act-2016.pdf

կոռուպցիայի դեմ պայքարում պետության կարողություններն ու հանձնառությունները: Բացի այդ, կոռուպցիոն բնույթի գործերի դատական քննության էական ձգձգումները կարող են հանգեցնել մեղադրյալների կամ նրանց օժանդակող անձանց կողմից վկաների նկատմամբ անիրավաչափ ազդեցություն գործելու, ապացույցները թաքցնելու, ինչպես նաև արդարադատության իրականացմանը այլ կերպ խոչընդոտելու վտանգի: Հետևաբար, մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը հնարավորություն կտա կենտրոնանալ միայն կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների վրա, կբարելավվի դատավոր-գործ հարաբերակցությունը, կնպաստի արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Ընդ որում, մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ունեցող մի շարք պետություններում սահմանված են կոռուպցիոն բնույթի գործերի դատական քննության ժամանակային սահմանափակումներ: Այսպես, Մալայզիայում նախատեսված է գործերի դատական քննության մեկամյա, Ֆիլիպիններում՝ եռամսյա, Նեպալում՝ վեցամսյա, Պակիստանում՝ մեկամսյա ժամկետ: Թեև հանուն արդարության անհրաժեշտ է նշել, որ նախատեսված սահմանափակումները ոչ միշտ են պահպանվում պրակտիկայում.

ամբողջականություն – մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու հաջորդ փաստարկը հանգում է նման դատարաններ ստեղծելու միջոցով կոռուպցիայից և քաղաքական գործիչների ու ազդեցիկ շրջանակների անիրավաչափ ազդեցությունից զերծ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից կոռուպցիոն գործերով արդարադատություն իրականացնելու ձգտման մեջ: Ընդ որում, եթե այս փաստարկը համադրենք հայկական իրականությանը, ապա ասվածի անուղղակի օրինակ կարող է հանդիսանալ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման նախաձեռնությունը, որը պայմանավորված է, ի թիվս այլնի, կոռուպցիոն հանցագործությունների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և անկախ քննության ապահովման անհրաժեշտությամբ: Ուստի, կարող է առաջանալ տրամաբանական հարց, թե արդյոք պետք չէ նման անկախությունը երաշխավորելու գործուն մեխանիզմներ ստեղծել՝ պետություն – հանցանք գործած անձ հարաբերության հաջորդ փուլի, մասնավորապես արդարադատության իրականացման համար: Նման գործուն մեխանիզմը կարող է հանդիսանալ հատուկ մասնագիտացված դատարանը, որը արդարադատություն կիրականացնի կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով: Այս առումով հետաքրքիր է Սլովակիայի փորձը: Մասնավորապես, Հատուկ քրեական դատարանի իրավազորությունն առավել վտանգավոր կոռուպցիոն հանցագործությունների վրա

տարածելու փաստարկներից մեկը հանդիսանում էր այն մտահոգությանը, որ կոռումպացված իշխանությունների և քրեական շրջանակների տեղական կապերը հնարավորություն կտային միջամտել շրջանային դատարանների կողմից արդարադատության իրականացման գործընթացին, մինչդեռ մայրաքաղաքում տեղակայված հատուկ դատարանի ստեղծումը կարող է արդյունավետորեն լուծել տվյալ խնդիրը:

մասնագիտացվածություն - մասնագիտացված կոռուպցիոն դատարան ստեղծելու հաջորդ փաստարկը սերտորեն փոխկապակցված է կոռուպցիոն գործերով արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացման փաստարկների հետ և հանգում է ոլորտային մասնագիտացվածություն ունեցող դատական կազմ ունեցող դատարան ստեղծելուն: Բազմաթիվ կոռուպցիոն գործեր, մասնավորապես այնպիսիները, որոնք ներառում են բազմաթիվ ֆինանսական գործարքներ և տարաբնույթ սխեմաներ, շատ ավելի բարդ են քննել դատավորների համար, քան սովորական քրեական գործերը: Հետևաբար, նման գործերով մասնագիտացված դատարանի ստեղծումը կոչված է ոչ միայն բարելավել արդարադատության արդյունավետությունը, այլ նաև արդարադատության որակը և հիմնավորվածությունը: Այս առումով կիրառելի է Խորվաթիայի օրինակը, որտեղ կոռուպցիոն բնույթ ունեցող և հանրային բարձր վտանգավորություն ունեցող այլ հանցագործություններով արդարադատություն իրականացնելու համար ստեղծված հատուկ դատական մարմինը կոչված էր լուծելու առավել բարդ և հանրային հետաքրքրություն ներկայացնող գործերը՝ որակյալ արդարադատություն իրականացնելու, հանրային սպասելիքները արդարացնելու նպատակով՝ առավել փորձառու եւ մասնագիտացված դատավորներին ներառելով տվյալ դատական մարմնում:

Այլ կերպ ասած, մասնագիտացումը հաճախ բխում է իրավունքում փոփոխություններին դատական համակարգը հարմարեցնելու անհրաժեշտությունից, այլ ոչ՝ կամայական ընտրությունից: Իրավակարգավորումների փոփոխությունները, լինի դա միջազգային, եվրոպական, թե ներպետական մակարդակում, և փոփոխվող դատական պրակտիկան ու դոկտրինը իրավագիտությունը դարձնում են ավելի և ավելի ընդարձակ ու բարդ: Դատավորի համար դժվար է տիրապետել այս բոլոր ոլորտներին, մինչդեռ հասարակությունը և դատավարության մասնակիցները դատարաններից պահանջում են ավելի ու ավելի բարձր մակարդակի պրոֆեսիոնալիզմ և արդյունավետություն: Հատկանշական է նաև, որ Հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորները քննում են խիստ արագ զարգացող,

տեխնոլոգիական առաջընթացից առատորեն օգտվելու միջոցով կատարվող արարքները, ինչը պահանջում է նեղ ոլորտային գիտելիքների առկայություն, դրանց անընդհատ թարմացում, հանրության համար հսկայական հետաքրքրություն և նշանակություն ունեցող գործերի քննում, առավել բարձր ճնշման պայմաններում աշխատանքի իրականացում, հակակոռուպցիոն բնույթի համաշխարհային, տարածաշրջանային և ներպետական տեսական բազայի, իրականացվող միջոցառումների իմացություն: Նման պայմաններում դատավորների մասնագիտացումը կարող է ապահովել նրանց անհրաժեշտ գիտելիքների և փորձի բազան, իրենց ընդդատյա ոլորտի իրավակարգավորումների խորը իմացությունը՝ այդպիսով բարելավելով կայացվող որոշումների որակը և հանգեցնելով դատական իշխանության հեղինակության բարձրացմանը:

Էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ գործերի նյութերի կենտրոնացումը ընտրված մասնագետ դատավորների ձեռքում կարող է նպաստել դատական որոշումների հետևողականությանը, հետևաբար՝ խթանել իրավական որոշակիությունը: Բացի այդ, եթե դատավորը՝ մասնագիտացման ոլորտից բխող անհրաժեշտությամբ պայմանավորված պետք է կիրառի այնպիսի գիտելիքներ, որ կապված են ոչ իրավական գիտությունների հետ, մասնագիտացման շնորհիվ դատավորները հնարավորություն են ստանում դրսևորել համապարփակ մոտեցում[24]:

1) <u>Հատուկ հակակոռուպցիոն դատարանի տեղը պետության դատական համակարգում:</u>

Կախված պետության դատական համակարգում մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի տեղից և այլ դատական մարմինների հետ փոխհարաբերություններից՝ կարող ենք առանձնացնել երկրների հետևյալ խմբերը՝

Առաջին. կան պետություններ, որտեղ առկա է առանձին մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան, որի կայացրած դատական ակտերի դեմ բողոքները ուղղակիորեն ներկայացվում են պետության բարձրագույն դատական մարմնին՝ առանց միջանկյալ բողոքարկման փուլի (Խորվաթիա, Սլովակիա, Կամերուն, Բուրունդի, Նեպալ, Պակիստան, Սենեգալ): Այս պետությունների մեծամասնությունում հատուկ հակակոռուպցիոն դատարանի դատավորներն իրենց կարգավիճակով հավասարեցվում են վերաքննիչ դատարանի դատավորներին:

---

[24] Տե՛ս OPINION (2012) NO. 15 OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES ON THE SPECIALISATION OF JUDGES adopted at the 13th plenary meeting of the CCJE (Paris, 5-6 November 2012), https://rm.coe.int/16807477d9, 02.03.2021թ.:

Երկրորդ. որոշ պետություններում գործում է հիբրիդային համակարգ, որի պայմաններում հակակոռուպցիոն դատարանը որոշ գործերի համար ծառայում է որպես առաջին ատյանի դատարան, իսկ որոշ գործերի համար էլ որպես վերաքննիչ ատյան (Ֆիլիպիններ և Ուգանդա): Ֆիլիպինյան հակակոռուպցիոն դատարանն ունի իրավազորություն կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների նկատմամբ որպես առաջին ատյանի դատարան միայն այն դեպքերում, երբ արարքը կատարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից: Այն դեպքերում երբ նույն արարքը կատարվել է ավելի ցածր օղակի պաշտոնատար անձանց կողմից, ապա գործը քննվում է ընդհանուր իրավասության դատարանի կողմից, որի կայացրած դատական ակտի համար հակակոռուպցիոն դատարանը կհանդիսանա վերաքննիչ ատյան: Նույն մոտեցումը դրված է նաև Ուգանդայի Բարձր դատարանի Հակակոռուպցիոն բաժանմունքի գործունեության հիմքում:

Երրորդ. որոշ պետություններում, որտեղ չկան հատուկ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ, առանձին դատավորներ լիազորված են արդարադատություն իրականացնելու կոռուպցիոն գործերով (Քենիա, Բանգլադեշ): Այս երկրներում այսպես կոչված հակակոռուպցիոն դատավորների դատական ակտերի դեմ բերված բողոքները մինչև պետության բարձրագույն դատական ատյան հասնելն անցնում են նաև վերաքննիչ բողոքարկման փուլը:

Չորրորդ, Բոթսվանայի Կոռուպցիոն դատարանը (հանդիսանում է Բոթսվանայի Բարձր դատարանի բաժանմունք) չի իրականացնում արդարադատություն որպես առաջին ատյանի դատարան, այլ քննում է ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված՝ կոռուպցիոն բնույթի գործերով կայացված դատական ակտերը:

Հինգերորդ. Բուլղարիայում, Աֆղանստանում, Ինդոնեզիայում և Մալայզիայում ստեղծվել են ընդհանուր իրավասության դատարանների համակարգին զուգահեռ գործող առաջին ատյանի և վերաքննիչ հակառուպցիոն դատարաններ:

2) <u>Դատարանի դատական կազմի անդամների քանակը.</u>

Այս առումով միջազգային պրակտիկայում ընդունելի մոտեցում է համարվում այն, որ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի անդամների թվաքանակը պետք է լինի այնքան, որ գործերի արդյունավետ և ողջամիտ ժամկետում քննությունը կասկածի տակ չդրվի: Կից ներկայացվում է որոշ պետությունների հակակոռուպցիոն դատարաններում առկա դատավորների ընդհանուր թվաքանակը՝

Սլովակիա - 13

Բուլղարիա - 19

Խորվաթիա - 61

Մալայզիա – 18

3) <u>Դատավորների նշանակման և լիազորությունների դադարեցման ընթացակարգերը.</u>

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հակակոռուպցիոն դատարանների դատավորներն ունեն այն նույն կարգավիճակը, ինչ ունեն ընդհանուր իրավասության դատարանների դատավորները, վերջիններիս ընտրության կամ նշանակման համար առանձին պահանջներ չեն նախատեսվում: Սակայն որոշ պետություններում կարող են նախատեսվել դատավորի պաշտոնում աշխատանքի փորձառության որոշակի ժամանակահատված (սովորաբար 8 կամ 10 տարի): Հակակոռուպցիոն դատարանի դատավոր ընտրվելու համար առանձին չափորոշիչներ են նախատեսված Սլովակիայում, որտեղ դատավորների թեկնածուների համար որպես լրացուցիչ ընթացակարգ է նախատեսված այսպես կոչված անվտանգության պարզումը (security clearance), որը միտված է պարզելու դատավորների բոլոր այն կապերը և կենսագրական տվյալները, որոնք կարող են վկայել վերջիններիս կոռուպցիոն կապերի կամ նման վտանգ լինելու վերաբերյալ:

Հակակոռուպցիոն մարմինների դատավորների ընտրության առանձնահատուկ ընթացակարգ է նախատեսված Ինդոնեզիայում, որտեղ տվյալ դատարանները բաղկացած են ոչ միայն պրոֆեսիոնալ դատավորներից, այլ նաև ad hoc դատավորներից (սովորաբար այդպիսիք դառնում են իրավունքի բնագավառի գիտնականները, պաշտոնաթող դատավորները և այլ իրավաբաններ): Ad hoc դատավորների թեկնածուները պետք է բավարարեն ընտրության բավականին խիստ չափանիշների: Ընդ որում, ad hoc դատավորների ընտրության հանձնաժողովները բաղկացած են ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այնպես էլ Գերագույն դատարանի ներկայացուցիչներից: Դատական կազմը բաղկացած է հինգ դատավորներից, որոնցից երեքը հանդիսանում են ad hoc դատավորներ, իսկ երկուսը՝ պրոֆեսիոնալ դատավորներ:

4) <u>Հակակոռուպցիոն դատարանների ընդդատության շրջանակները</u>

Հակակոռուպցիոն դատարանների ընդդատությունը պարզելու համար անհրաժեշտ է դիտարկել տարբեր պետություններում առկա համապատասխան դատական մարմինների՝

ա) ընդդատյա գործերի/արարքների շրջանակը,

բ) տվյալ արարքների ծանրության աստիճանը,

գ) պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը:

ա) արարքների շրջանակը.

Տարբեր պետություններում գործող հակակոռուպցիոն դատարանները ներկայումս քննում են լայն շրջանակ ունեցող կոռուպցիոն բնույթի հանցագործություններին առնչվող գործեր: Մասնավորապես, Խորվաթիայում հակակոռուպցիոն դատարանը քննում է ոչ միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոռուպցիոն գործունեությանը առնչվող գործեր, այլ նաև կազմակերպված հանցավորությանն առնչվող գործեր, Բուլղարիայում ևս ինչպես կոռուպցիոն բնույթ ունեցող, այնպես էլ կազմակերպված հանցավորությանն առնչվող գործեր, Սլովակիայում Հատուկ քրեական դատարանը իրավազորություն ունի ինչպես կազմակերպված հանցավորության և դիտավորյալ սպանությունների, այնպես էլ կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների և փողերի լվացման նկատմամբ, ինչպես նաև պետական դավաճանության նկատմամբ.

բ) տվյալ արարքների ծանրության աստիճանը..

Այս չափանիշի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ պետություններում կոռուպցիոն բնույթ ունեցող ոչ բոլոր հանցագործություններն են ենթակա հատուկ հակակոռուպցիոն դատարանի ընդդատությանը, այլ միայն կոռուպցիոն բնույթ ունեցող այն հանցագործությունները, որոնցով պատճառված վնասը գերազանցում է որոշակի սահմանային չափը.

գ) պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը.

Որոշ պետությունների հակակոռուպցիոն դատարանների իրավազորությունը սահմանափակված է միայն այն հանցագործություններով, որոնք կատարվել են բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից:

1. **Մարդու իրավունքների եվրոպական դատարանը** *Ֆրունին ընդդեմ Սլովակիայի* գործով (Fruni v. Slovakia, գանգատ թիվ 8014/07, 21 հունիս 2011) քննության է առել դիմումատուի բարձրացված գանգատն առ այն, որ Հատուկ քրեական դատարանի (Սլովակիայում գործող հատուկ հակակոռուպցիոն դատարանի անվանումը) կողմից իր դատապարտման հետևանքով խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ իր դեմ ներկայացված մեղադրանքը *օրենքի հիման վրա ստեղծված, անկախ և անկողմնակալ* դատարանի կողմից քննության իրավունքը: ՄԻԵԴ-ն այս գործով վճռի մեջ անդրադառնալով դիմումատուի բարձրացրած փաստարկներին, նշել է.

«…[Ն]ախադեպային իրավունքի համաձայն «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթը նշանակում է, որ ժողովրդավարական հասարակությունում դատական

իշխանությունը չպետք է կախված լինի գործադրի հայեցողությունից, այլ կարգավորվի օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքների միջոցով…

…Սույն գործով դիմումատուն դատապարտվել է հատուկ դատարանի կողմից, իսկ նրա գանգատը քննության է առնվել Գերագույն դատարանի հատուկ բաժանմունքի կողմից: Այս մարմինների կարգավիճակը հստակորեն որոշված է Հատուկ դատարանի մասին ակտով, որը հանդիսանում է Պառլամենտի կողմից ընդունված օրենք: Այս մարմինների իրավազորությունն ու իրավասությունները հստակ սահմանված են Հատուկ դատարանի մասին ակտով, իսկ այդ մարմիններում գործող ընթացակարգերը կարգավորվում են քրեական դատավարության օրենսգրքով…

… Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող դիտարկվել իբրև հատուկ քրեական դատարանների ստեղծումը արգելող նորմ, եթե վերջիններիս հիմնադրումն ունի օրենսդրական հիմք: Դատարանն ընդունում է, որ կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը կարող են պահանջել հատուկ բնույթ ունեցող մեթոդներ, ընթացակարգեր և ինստիտուտներ…»:

Այսպիսով, սույն գործով ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումներից բխում է, որ հակակոռուպցիոն դատարան ստեղծելու գործընթացում անհրաժեշտ է պարտադիր կերպով հաշվի առնել հետևյալը՝

- նման դատարանը պետք է ստեղծվի ՀՀ ԱԺ կողմից ընդունված օրենքի միջոցով,
- դատավորները պետք է նշանակվեն և պաշտոնից ազատվեն հստակ և որոշակի ընթացակարգերի միջոցով՝ բացառելով գործադիրի հայեցողական ազատությունը:

2. Կոռուպցիոն բնույթի քրեական գործեր քննելու համար մասնագիտացված առանձին դատարան ստեղծելու, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող դատավորների թվակազմը սահմանելու համար կատարվել է հետևյալ ուսումնասիրությունը և վերլուծությունը.

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝

1. 2017 թվականի հունվարից հոկտեմբեր ամիսներին գրանցվել է հանցագործության 14.554 դեպք, որոնցից 7.069-ը՝ ք.Երևանում:
2. 2018 թվականի հունվարից հոկտեմբեր ամիսներին գրանցվել է հանցագործության 20.267 դեպք, որոնցից 9.900-ը՝ ք.Երևանում,
3. 2019 թվականի հունվարից հոկտեմբեր ամիսներին գրանցվել է հանցագործության 21.768 դեպք, որոնցից 11.851-ը՝ ք.Երևանում,

4. 2020 թվականի հունվարից հոկտեմբեր ամիսներին գրանցվել է հանցագործության 22.008 դեպք, որոնցից 11.230-ը՝ ք.Երևանում:

Վերոգրյալ տվյալները վկայում են այն մասին, որ առկա է հանցավոր դեպքերի աճ, ընդ որում, Գլխավոր դատախազությունից ստացված տվյալների համաձայն՝ 2019 թվականի հուլիսի մեկից մինչև 2020 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում հսկողություն է իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ 2228 քրեական գործի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ: Այսպիսով պարզ է դառնում, որ կտրուկ աճող ծանրաբեռնվածության պայմաններում անհրաժեշտ է մասնագիտացված մարմինների ստեղծում, որպեսզի հնարավոր լինի քրեական գործերով քննությունը, այդ թվում՝ դատական քննությունը հնարավորինս սեղմ ժամկետներում ու առավել արդյունավետ իրականացվի:

Առանձին ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տվյալների 2020 թվականի ընթացքում ՀՀ-ում գրանցվել է կոռուպցիոն բնույթի 1114 հանցագործության դեպք, որից 157-ը՝ կաշառակերության, 160-ը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ յուրացման, 155-ը՝ պաշտոնեկան կեղծիքի, 389-ը՝ պաշտանեական լիազորությունները չարաշահելու, 52-ը՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքեր են:

Այսպիսով պարզ է դառնում, որ չնայած գրանցված հանցագործության դեպքերի քանակի դինամիկ աճին, դեռևս շատ է տատանվում կոռուպիոն հանցագործությունների քանակը և անհրաժեշտ է ժամանակ, մինչև առավել հաստատուն կդառնա կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարը՝ ձևավորվելով որպես հաստատուն ու արդյունավետ գործող ինստիտուտ: Այն հանգամանքը, որ հանցավորության թիվը աճել է վերջին տարիներին, իսկ կոռուպցիոն բնույթի հանցագործություններով իրականացվող նախնական քննության քանակը զգալիորեն մեծ է, այդ ամենը օբյեկտիվ հիմք է տալիս, ենթադրելու, որ առաջիկայում դատարաններում քննվող կոռուպցիոն հանցագործությունների գործերի թիվը զգալիորեն աճելու է: Այլ կերպ ասած, հանցավոր դեպքերի քանակական աճը իր հերթին հանգեցնելու է խնդիրների՝ դատավորների համար ողջամիտ ծանրաբեռնվածություն ապահովելու, բազմաթիվ գործերի շրջանակում բարձր հանրային վտանգավորությամբ աչքի ընկնող՝ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում:

Դատավորների թվակազմը սահմանելու համար կատարված ուսումնասիրության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

Քրեական մասնագիտացման մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2016 թվականին կազմել է 79 քրեական գործ, 2017 թվականին՝ 85 քրեական գործ, իսկ 2018 թվականին՝ 82 քրեական գործ: Այսինքն, վերջին երեք տարիների կտրվածքով քրեական մասնագիտացման մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 82 քրեական գործ: Վերոնշյալից բացի, հարկ է նշել, որ 11 քրեական գործով անձինք մեղադրվում են միաժամանակ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու մեղադրանքով:

Միևնույն ժամանակ՝ 2019 թվականի հուլիսի մեկից մինչև 2020 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից քննվել է Քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ 275 քրեական գործեր, իսկ 2020 թվականի ընթացքում՝ 322 (որոնցից 205-ը՝ հանցանքների համակցությամբ):

Այսպիսով, Դատական դեպարտամենտի կողմից հրապարակված և տրամադրած տվյալների ուսումնասիրությունից և համադրությունից պարզ է դառնում է, որ դատարաններում քննվող Քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն գործերի հարաբերակցությունը այլ քրեական գործերի հետ կազմում է մոտավորապես 14%:

Նման պայմաններում անհրաժեշտ է ապահովել հակակոռուպցիոն դատարանի դատավորների քանակի համամասնությունը քննված կոռուպցիոն հանցագործությունների թվին՝ որոշ չափով ապահովելով առավել ցածր ծանրաբեռնվածություն, քանի որ հակակոռուպցիոն քրեական գործերը պահանջում են ոլորտի առավել մանրամասն իմացություն, իսկ գործերը կապված են լինելու պաշտոնատար անձանց կողմից կատարված հանցավոր դեպքերի հետ, երբեմն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված:

Տվյալ պարագայում «ՀՀ դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պետք է գործեն առնվազն 147 դատավորներ: Առկա վիճակագրական տվյալների համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 61-ը քննում են քրեական գործեր, իսկ քրեական մասնագիտությամբ դատավորների 3 պաշտոն թափուր է: Նման պայմաններում, հաշվի առնելով, որ քրեական գործերի ծանրաբեռնվածության մոտ 14%-ն են կազմում կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, պարզ է դառնում, որ նույն տոկոսային հարաբերակցությունը քրեական գործեր քննող դատավորների քանակի նկատմամբ

կիրառելիս ստացվում է, որ բացառապես կոռուպցիոն բնույթի հանցագործություններ քննելու դեպքում պետք է գործեն հակակոռուպցիոն հանցագործություններ քննող առնվազն 9 դատավոր (64/100*14≈9): Միևնույն ժամանակ հաշվի առնելով հակակոռուպցիոն հանցագործություններ քննելիս դատավորների ծանրաբեռնվածության նվազեցման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է դատավորների քանակը սահմանել առնվազն 10 դատավոր, իսկ եթե հաշվի առնենք, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն Հակակոռուպցիոն դատարանի դատավորները չեն իրականացնելու, ապա գտնում ենք, որ այդ քանակը բավարար է ապահովելու դատավորների հնարավորինս ցածր ծանրաբեռնվածությունը և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով դատական քննության արդյունավետությունը:

Պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործերով դատավորների քանակի հարցի պարզման նպատակով իրականացված ուսումնասիրության առնչությամբ հարկ է նշել, որ 2019 թվականի ընթացքում դատախազների կողմից դատարաններ է ներկայացվել պետական շահերի պաշտպանության 76 հայց:

Միևնույն ժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով նորաստեղծ վարչությունում նշված վարչության ձևավորման օրվանից՝ 2020թ. սեպտեմբերի 3-ից, մինչև 2021 թվականի փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է 220 ուսումնասիրություն, իսկ պետական շահերի պաշտպանության վարչությունում՝ 74 ուսումնասիրություն:

Վերոգրյալից հետևում է, որ ապօրիի ծագման գույքի բռնագանձնման ինստիտուտը թեև համեմատաբար նոր է, այնուամենայնիվ այն 2020 թվականին 2019 թվականի համեմատությամբ հանգեցրել է գործերի թվի էական աճի:

Նման պայմաններում միաժամանակ հաշվի առնելով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերի առավել բարդ բնույթը, ինստիտուտի համեմատաբար նոր և կտրուկ զարգացող լինելը մեր իրականությունում, ինչպես նաև՝ քաղաքացիական գործերով դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածությունը թեթևացնելու անհրաժեշտությունը, առաջարկվում է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող

գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը քննելու համար նախատեսել 5 դատավոր:

Ամբողջ վերոշարադրյալի հաշվառմամբ անհրաժեշտ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող և հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորների առկայությունը համապատասխանաբար Վերաքննիչ քրեական և Վերքաննիչ քաղաքացիական դատարաններում: Միևնույն ժամանակ, կազմի կանխատեսելիությունը հնարավորինս նվազեցնելու նպատակով առաջարկվում է ինչպես Վերաքննիչ քրեական, այնպես էլ Վերաքննիչ քաղաքացիական դատարաններում ապահովել առնվազն 6-ական առանձնացված դատավորներ: Բացի այդ, հաշվի առնելով առանձնացված դատավորներ նախատեսելու դեպքում ծանրաբեռնվածության ավելացումը՝ առաջարկվում է Վերաքննիչ քրեական և Վերքաննիչ քաղաքացիական դատարաններում համապատասխանաբար ավելացնել դատավորների թվակազմը:

II. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ կոռուպցիայի դեմ պայքարում ավելի ու ավելի է տարածում գտնում կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարանների ստեղծումը:

Անհրաժեշտ նախապայման է, որ հակակոռուպցիոն դատարաններում ընդգրկվելիք դատավորների ընտրության հարցը ևս կարգավորվի օրենքով և սահմանվեն հստակ չափանիշներ: Հակառակ պարագայում, որքան էլ որ մասնագիտորեն պատրաստված գործը քննվի դատարանում, եթե դատավորը չլինի մասնագիտացված հակակոռուպցիոն գործերում, որտեղ առկա են մի շարք առանձնահատկություններ, օրինակ՝ ապօրինի հարստացման կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերում ապացուցման բեռի հետ կապված, ապա չի կարող օբյեկտիվ եւ բազմակողմանի քննության արդյունքում վճիռ կայացնել: Արդյունքում, պետության կողմից իրականացված ամբողջ հակակոռուպցիոն ջանքերը զուր կանցնեն:

Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը նպատակ է հետապնդում նաև բարձրացնել դատական համակարգի արդյունավետությունը: Մասնագիտացված դատարանը, որը զբաղվում է միայն կոռուպցիոն և համանման իրավախախտումների քննմամբ, կունենա առավել արդյունավետ դատավոր-դատական գործ հարաբերակցություն, հնարավորություն կստեղծվի դատական գործերը քննել առավել արագ՝ հակակոռուպցիոն դատարանի կողմից գործի քննության առավելագույն ժամկետի սահմանմամբ: Կարևոր է, որ դրանք լինեն իրատեսական: Օրինակ՝ Պաղեստինում նախատեսված է գործերի քննության տասնօրյա ժամկետ՝ յոթ օր երկարացնելու հնարավորությամբ, սակայն

գործնականում չի պահպանվում: Ֆիլիպիններում և Պակիստանում սահմանված է երեք ամիս, սակայն պրակտիկայում ևս չի պահպանվում: Նեպալում սահմանված է կես տարի ժամկետ: Մալայզիայում սահմանված ժամկետն առավել իրատեսական է՝ մեկ տարի:

Ստորև ներկայացված է տարբեր պետություններում հակակոռուպցիոն դատարանների վերաբերյալ փորձը:

Սլովակիա

Սլովակիայի հակակոռուպցիոն դատարանը կազմավորվել է Մասնագիտացված քրեական դատարանի մասին 291/2009 օրենքով:

Սլովակիայի հակակոռուպցիոն դատարանը, բացի կոռուպցիոն գործերով դատական քննությունից, իրականացնում է նաև սպանության և փողերի լվացման գործերով քննություն: Սլովակիան միջին կոռումպացված երկիր է: Այստեղ հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանը բաղկացած է 13 դատավորից, որոնք նշանակվում են 5 տարի ժամկետով: Ոչ մեծ ծանրության գործերի քննությունը իրականացվում է միանձնյա, իսկ առավել ծանր հանցագործությունների պարագայում իրականացվում է գործերի կոլեգիալ քննություն՝ 3 հոգուց բաղկացած դատավորների կազմով: Գործերի քննության միջին տևողությունը 4 ամիս է: Մասնագիտացված դատարանում դատավորի միջին ամսական աշխատավարձը 150 հազար սլովական կրոն է, ի տարբերություն այլ ատյանների դատավորների, որոնց ամսական միջին աշխատավարձը կազմում է 40 հազար կրոն: Համեմատության համար մասնագիտացված դատարանների դատավորների հիմնական ամսական աշխատավարձը կազմում է Սլովակիայի ազգային ժողովի անդամի (պատգամավորի) աշխատավարձի 130%-ի չափ: Դատավորները նաեւ ստանում են երկու լրացուցիչ աշխատավարձ (մայիսին և նոյեմբերին), բացի այն դեպքերից, երբ չեն համապատասխանում օրենքով սահմանված պայմաններին:

Մասնագիտական քննություն և հոգեբանական թեստ հանձնած դատավորների թեկնածուների ցուցակը փոխանցվում է դատական խորհրդի՝ բաղկացած 9 դատավոր անդամներից և նույնքան էլ ընտրված իշխանության մյուս թևերի կողմից: Սլովակիայում այս ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը առաջին հերթին պայմանավորված էր դատական և իրավապահպան մարմինների կոռումպացված լինելու հանգամանքով:

Բոթսվանա

Բոթսվանայում կոռուպցիայի դեմ պայքարում իր դերն է խաղացել հակակոռուպցիոն դատարանը, որը ստեղծվել է 2013 թվականին: Յուրաքանչյուր դատավորի վարույթում տարեկան 300-400 դատական գործ է լինում:

Մասնագիտացված դատարանի դատավորկարող է դառնալ միայնայն դատավորը, ով ունի 7 տարվա իրավաբանական ստաժ:

Ինդոնեզիա

Ինդոնեզիայի կոռուպցիոն հանցագործությունների հատուկ դատարանը առաջին անգամ ստեղծվել է 2002 թվականին: Ներկայիս դատարանը ստեղծվել է 2009 թվականին:

Մասնագիտացված դատավորները նշանակվում են Գերագույն դատարանի նախագահի կողմից եւ նշանակման պահից ազատվում են այլ գործեր լսելու լիազորությունից: Որպեսզի դատավորը նշանակվի որպես մասնագիտացված դատավոր և լսի կոռուպցիոն գործեր՝ պետք է՝

1.ունենա 10 տարվա դատավորի մասնագիտական ստաժ.

2. ունենա քրեական գործերի քննության ստաժ.

3. լինի արդար եւ ունենա բարձր բարոյական հատկանիշներ, բարի համբավ.

4. երբևէ տույժի ենթարկված չլինի եւ ներգրավված չլինի քրեական գործերում

5.ունենա գերագույն դատարանի կողմից տրված կոռուպցիոն գործեր քննելու համապատասխան վկայական.

6.ունենա ակտիվների վերաբերյալ ներկայացված հաշվետվություն:

Որպես դատական համակարգի ընդհանուր մաս՝ մասնագիտացված դատավորները քննում են կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործեր և վճարվում են նույն չափով և օգտվում են նույն երաշխիքներից, ինչ մնացած բոլոր ատյանների դատավորները:

Խորվաթիա

Խորվաթիայի քրեական գործերով հակակոռուպցիոն դատարանները ձևավորվել են 2008 թվականին, սակայն օրենսդրությունը՝ «Դատարանների ակտը», չի ընդունվել մինչև 2010 թվականը:

Հակակոռուպցիոն դատարանները Խորվաթիայի առաջին ատյանի մասնագիտացված դատարաններն են: Խորվաթիայի հակակոռուպցիոն դատարաններն ունեն իրավասություն քննելու ոչ միայն բարձր մակարդակի կոռուպցիոն հանցագործությունների, այլ նաև կազմակերպված հանցավորության դեպքում:

Մասնագիտացված քրեական դատավորները տեղակայված են 4 մեծագույն քաղաքներում՝ Զագրեբում, Ռիջեկայում, Սփլիթում և Օսիջեկում: Այս քաղաքների դատարանները պատասխանատու են քննելու քրեական և կոռուպցիոն գործեր:[25]

---

[25] Id. art. 32.1.

Միայն այն դատավորը, ով ունի փորձառություն լսելու ամբողջական քրեական գործեր, կարող է նշանակվել այդ դատարանում դատավոր: [26]Դատավորները նշանակվում են 4 տարի ժամկետով:[27] Դատավորների վարձատրությունը բաղկացած է նրանց հիմնական աշխատավարձից և այլ ծախսերի համար նախատեսված վճարներից:[28]

Բուլղարիա

Հակակոռուպցիոն դատարանների ձևավորման հիմքում ընկած է Քրեական դատավարության օրենսգիրքը[29], որն ընդունվել է 2012 թվականին: Այնուհետև, 2017 թվականին Բուլղարիայի խորհրդարանը փոփոխություններ է կատարել Քրեական դատավարության օրենսգրքում, որով և ստեղծվել են կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարանները:

Հակակոռուպցիոն դատական համակարգը Բուլղարիայում ներառում է ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ատյանի դատարանը:[30] Մասնագիտացված քրեական վերաքննիչ դատարանը գտնվում է Բուլղարիայում՝ Սոֆիա քաղաքում: Այդ դատարանը ուսումնասիրում է առաջին ատյանից եկած բողոքները և առարկությունները: [31]Գործերը քննվում են 3 դատավորի կազմով:[32]

Մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի դատավոր կարող է նշանակվել այն դատավորը կամ դատախազը, որն ունի առնվազն 10 տարի մասնագիտական փորձ:[33] Մասնագիտացված հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանի դատավոր կարող է նշանակվել այն դատավորը, որն ունի առնվազն 12 տարվա մասնագիտական ստաժ, որից առնվազն 8 տարին հանդես է եկել որպես դատավոր, դատախազ կամ քրեական գործեր քննող մագիստր:[34]

Ուկրաինա

Ուկրաինայի խորհրդարանի կողմից 2018 թվականին ընդունվել է 7441 օրենքը[35], որով սահմանվում է Ուկրաինայի Բարձր հակակոռուպցիոն դատարանի ստեղծման իրավական հիմքը: Բարձր հակակոռուպցիոն դատարանը

---

[26] Id. art. 32.1.
[27] Id. arts. 3, 4.
[28] Id. art. 3.
[29] Տե՛ս https://www.u4.no/assets/bulgaria-penal-procedure-code-2012-english-translation.pdf
[30] Տե՛ս Id. arts. 100a-100f, 107a-107c.
[31] Տե՛ս Law N 64, supra note 2, art. 107a.
[32] Տե՛ս Id. art. 105.
[33] Տե՛ս Id. art. 164.3.
[34] Տե՛ս Id. art. 164.6.
[35] Տե՛ս *Բարձր հակակոռուպցիոն դատարանի մասին օրենք,* 2018թ., https://www.u4.no/assets/ukraine-anti-corruption-court-law

մասնագիտացված դատարան է Ուկրաինական դատական համակարգում, որը գործում է 2019 թվականի ապրիլի 11-ից: Ներկայումս առաջին ատյանի և վերաքննիչ ատյանի դատարաններում գործունեություն է ծավալում 38 դատավոր: Այս դատավորները ընտրվում են բացառապես բաց մրցույթի արդյունքում: Այս գործընթացի տարբերությունն այն է, որ փորձագետներ ևս ներգրավված են դատավորների ընտրության գործընթացում: Ի թիվս այլ գործառույթների՝ հակակոռուպցիոն դատարաններն իրականացնում է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի վերականգնման գործառույթ:

Ուկրաինայում դատավորների բարեվարքության ստուգման մեխանիզմները տարբեր են՝ պայմանավորված, թե որ դատարանի դատավոր են հանդիսանում նրանք: Այսպես, բացի հակակոռուպցիոն դատարանից, մյուս դատարանի դատավորների և դատավորի թեկնածուների բարեվարքությունը ստուգվում է Բարեվարքության հասարակական խորհրդի կողմից, որը տալիս է համապատասխան եզրակացություն: Գրավոր եզրակացությունը հրապարակվում է խորհդի կայքում: Եզրակացությունը տրամադրվում է Դատավորների որակավորման բարձրագույն խորհրդին, որը կարող է բացասական եզրակացության դեպքում որոշել դատավորի կամ թեկնածուի ընտրության մասին, եթե դրան կողմ է ընտրում Դատավորների որակավորման բարձրագույն խորհրդի 11 անդամ: Դրանից հետո դատավորի թեկնածուները ներկայացվում են Բարձրագույն դատական խորհրդին՝ նշանակման համար: Բարեվարքության հասարակական խորհուրդը գործում է կամավոր հիմունքներով, այն կազմված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Բարեվարքությունը ստուգվում է հետևյալ կերպ. խորհուրդը ստուգում է դատավորի կամ թեկնածուի և նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների հայտարարագրերը, ծախսերը, հարկային պարտավորությունները և սահմանային հատումները: Ստուգումը կատարվում է հայտարարագրի տվյալներն Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) միջոցով տեղեկություններ ճշտելու միջոցով, քանի որ Բյուրոն ունի ուղղակի հասանելիություն Ուկրաինայում գործող բոլոր տեղեկատվական բազաներ: Վերլուծում են նաև վերոնշյալ անձանց վերաբերյալ ԶԼՄ-ների հրապարակումները, սկանդալները, փաստեր են հավաքում անձի կենսակերպի մասին: Վերոնշյալից բացի, հարցազրույցի փուլին ևս խորհրդի անդամներից որևէ մեկը կամ մի քանիսը մասնակցում են: Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների բարեվարքությունը ստուգվում է միջազգային փորձագետների խորհրդի կողմից: Վերջիններս հավաքում են նույն տեղեկություններն իրենց աշխատակազմի և Բյուրոյի միջոցով: Միջազգային

փորձագետների բացասական եզրակացության դեպքում դատավորին հնարավոր չէ նշանակել անգամ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների մեծամասնության դեպքում:

III. Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգում ընդգրկված մարմինների բարեվարքությանն անդրադառնալիս՝ հարկ է նշել, որ ներկայումս արդեն ներդրված են կառուցակարգեր դատավորների թեկնածուների հավակնորդների, Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի դատավորների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության համար, իսկ նախագծով առաջարկվող կարգավորումների ընդունման և կիրարկման պայմաններում առհասարակ տվյալ պահանջը կկիրառվի բոլոր ատյանների դատավորների թեկնածուների համար:

Զուգահեռաբար շրջանառվել և լրամշակվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը, որով ևս նախատեսվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի բոլոր ծառայողների, այդ թվում՝ Հակակոռուպցիոն նախագահի բարեվարքությունը, նախքան նրանց պաշտոնի անցնելը, ենթակա է ստուգման Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:

Միևնույն ժամանակ, սույն օրենսդրական փաթեթի շրջանակներում ընդգրկվել են ՀՀ դատախազների բարեվարքության ստուգման մեխանիզմներ սահմանող կարգավորումներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության դատախազությունը կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի կարևորագույն բաղադրատարրերից է, այն արդեն իսկ ստեղծված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ստեղծվելիք Հակակոռուպցիոն կոմիտեի և Հակակոռուպցիոն դատարանի հետ ամբողջացնելու է կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը: Բացի այդ, անցումային դրույթների շրջանակներում նախատեսվել են մեխանիզմներ, որպեսզի Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում պաշտոն զբաղեցնող դատախազները պարտավոր են անցնել բարեվարքության ուսումնասիրություն՝ հաշվի առնելով հիշյալ վարչության առանձնահատուկ դերը կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում:

Հարկ է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների գործերով հսկողություն իրականացնող մասնագիտացված դատախազների բարեվարքության ստուգման մեխանիզմները հիմնավորվում են նաև միջազգային փորձով և միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներով: Այսպես.

Ալբանիա

Ալբանիայում 2016 թվականին ընդունվել է «Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքար մղող ինստիտուտների կազմակերպման և գործունեության մասին»[36] օրենքը: Օրենքով սահմանվում է կոռուպցիայի դեմ պայքար մղող ինստիտուցիոնալ մարմինների համակարգը և դրանց գործունեության կարգը: Սույն օրենքի հիման վրա ստեղծվում է Հատուկ դատախազություն, որը իրականացնում է քրեական հետապնդում և պետության անունից պաշտպանում է մեղադրանք Հակակոռուպցիոն և կազմակերպված հանցավորության առաջին և վերաքննիչ ատյանի դատարաններում, Բարձրագույն դատարանում և իրականացնում է այլ գործառույթներ: Մյուս մարմինը Հետաքննության ազգային բյուրոն է: Սույն մարմինը իրականացնում Հատուկ դատախազության ոլորտում առկա հանցագործությունների քննությունը: Սույն մարմինների՝ ներառյալ մասանգիտացված դատարանների աշխատակիցների ընտրությունը իրականացվում է բարեվարքության և մասնագիտական գիտելիքների պատշաճ ստուգումից հետո: Բարեվարքության ստուգումը իրականացվում է նույն օրենքի շրջանակներում: Պաշտոնի նշանակվելիս իրականացվում է

- Բարեվարքության և ակտիվների ստուգում
- Թեկնածուի տրված համաձայնության հիման վրա որոշակի ժամանակահատվածով իրականացվում է բանկային հաշիվների և կապի միջոցների հսկողություն: Համաձայնությունը տրվում է գրավոր եղանակով:
- Մերձավոր ազգականների գրավոր համաձայնության հիման վրա որոշակի ժամանակահատվածով իրականացվում է վերջինների բանկային հաշիվների և կապի միջոցների հսկողություն:

Թեկնածուները ներկայացնում են ակտիվների և բարեվարքության հայտարարագիր: Սույն պահանջը համարվում է կատարված եթե թեկնածուն նախորդ 180 օրերի ընթացքում ենթարկվել է Ակտիվների և շահերի բախման աուդիտի և հայտարարագրերի բարձրագույն տեսչության կողմից աուդիտի և որի ընթացքում չի բացահայտվել որևէ հակաիրավական երևույթ: Սույն տեղեկատվությունը ստուգելու համար ձևավորվում է ad hoc կոմիտե, որում ընդգրկվում են Հատուկ Դատախազության, Հակակոռուպցիոն և կազմակերպված հանցավորության դատարաններից, Հետաքննության ազգային բյուրոի ներկայացուցիչներ: Սույն մարմինների ներկայացուցիչները ընտրվում են հատուկ կարգով: Օրինակ՝ կոմիտեի անդամ դատավորը ընտրվում է վիճակահանությամբ,

[36] Տե՛ս https://euralius.eu/index.php/en/library/albanian-legislation/send/90-institutions-combating-corruption-and-organized-crime/239-law-on-the-organization-and-functioning-of-institutions-for-combating-corruption-and-organized-crime-en

որի ընթացքը գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի հսկողության ներքո: Կոմիտեն 120 օրվա ընթացքում կատարում է ուսումնասիրություն, ստուգելով ակտիվների և բարեվարքության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը: Պետական տարբեր մարմիններից ստացված փաստաթղթերը կցվում են թեկնածուի գործին և պահվում են կոմիտեի եզրակացության հետ մեկտեղ: Կոմիտեն կարող է բոլոր պետական մարմիններից պահանջել տեղեկատվություն իրականացնելու համար ակտիվների և բարեվարքության գնահատում: Թեկնածուն կարող է ներկայացնել դիմում՝ ծանոթանալու իր վերաբերյալ հավաքված տեղեկատվությանը: Թեկնածուի վերաբերյալ գաղտի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը չեն կցվում նրա անձնական գործին և կոմիտեն պարտավոր է պահել դրա կոնֆիդենցիալությունը: Հարկ է նշել նաև, որ բացի Հատուկ դատախազության աշխատակիցներից, բարեվարքության ստուգման համակարգ ներդրված է նաև դատախազների թեկնածուների նշանակման ժամանակ՝ «Ալբանիայի Հանրապետության Դատավորների և դատախազների կարգավիճակի մասին»[37] օրենքով: Օրենքի 32-րդ հոդվածը կարգավորում է թեկնածուների բարեվարքության ստուգման հետ կապված հարաբերությունները: Խորհուրդը յուրաքանչյուր դիմորդի ակտիվների և բարեվարքության ստուգման նպատակով հայցում է տեղեկատվություն Ակտիվների և շահերի բախման աուդիտի և դեկլարացիայի բարձրագույն տեսչությունից, Գլխավոր դատախազությունից, Ֆինանսական, հարկային գործառույթներ իրականացնող մարմիններից, Հետաքննության ազգային բյուրոյից, Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պետական մարմիններից: Խորհրդի պահանջով պետական և ոչ պետական մարմինները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել տեղեկատվություն, փաստաթղթեր և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անհրաժեշտ են թեկնածուի բարեվարքության ստուգման համար: Թեկնածուի հետագա ուսումնառությունը մերժվում է, եթե նրա ակտիվները չեն հիմնավորվում օրինական ճանապարհով ստացվող եկամուտներով, կամ Օպերատիվ հետախուզական մարմիններից և Հետաքննության ազգային բյուրոյից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի թեկնածուն ունի կապվածություն կազմակերպված հանցավորության հետ կամ առկա է օրենքով սահմանված մերժման այլ հիմքեր:

Հետագայում ակտիվների և բարեվարքության ստուգում անցնում են նաև պաշտոնի առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձինք: Պաշտոնի

---

[37] Տե՛ս http://rai-see.org/wp-content/uploads/2019/04/Albania_law_status_judges_prosecutors_2017_en.pdf

բարձրացման համար պարտադիր պայման է անցնել բարեվարքության ստուգում և չունենալ կարգապահական գործող տույժ:

Ուկրաինա

Ուկրաինայում դատախազների թեկնածուների բարեվարքության ստուգումը իրականացվում է ինչպես «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով, այնպես էլ «Դատախազության մասին»[38] և այլ օրենքներով: «Դատախազության մասին» օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների այն թեկնածուները, որոնք հաջողությամբ անցել են որակավորման քննությունները «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով սահմանված կարգով անցնում են հատուկ ստուգում: Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե թեկնածուի վարքագծի և բարեվարքության վերաբերյալ ստացվում է բացասական տեղեկատվություն, կարգապահական վարույթ իրականացնող մարմինը դատախազի թեկնածուի մասնակցությամբ քննարկում է ստացված տեղեկատվությունը: Թեկնածուն ունի իրավունք ծանոթանալու այդ տեղեկատվության հետ և ներակայցնելու բացատրություններ: Թեկնածուն կարող է ընդունել կամ ժխտել ներկայացված տեղեկատվությունը: Հարուցված վարույթի ընթացքում կարգապահական վարույթ իրականացնող մարմինը կարող է ընդունել որոշում՝ արգելելով թեկնածուին մասնակցել նշանակման համար անցկացվող հետագա փուլերին:

Հատկանշական է, որ Դատավորների և դատախազների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման վրա կայացվող որոշումները տարբերվում են միմյանցից: Եթե դատախազի թեկնածուները օրենքով ունեն իրավունք ծանոթանալու իրենց վերաբերյալ ստացված տեղեկատվությանը և ներկայացնելու բացատրություններ, ապա «Դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին» օրենքը դատավորների թեկնածուներին նման հնարավորություն չի տրամադրում:

Շվեցարիա[39]

Շվեյցարիայում դատախազների թեկնածուների նկատմամբ ևս իրականացվում է բարեվարքության ստուգում: Դատախազների թեկնածուների բարեվարքությունը ստուգելիս հիմք են ընդունվում հետևյալ աղբյուրները՝ Կոնֆեդերացիայի և տեղական մարմինների՝ կանտոնների անվտանգության և քրեական հետապնդման մարմինների գրանցամատյանները ինչպես նաև քրեական գործերով գրառումները, կանտոնական դատախազության և սնանկության գրասենյակների

---

[38] Տե՛ս https://zakon.rada.gov.ua/laws/show/1697-18

[39] Տե՛ս https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806fceda էջ 48

գրանցամատյանները, հարցազրույց տվյալ անձի հետ և վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց հետ և այլն: Բարեվարքության ստուգման նման համակարգը ուղղված է թեկնածուի և նրա ապրելակերպի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն հավաքելուն, որը ներառում է իր մեջ նաև վերջինիս մտերիմ կապերի, ընտանիքի, ֆինանսական դրության, այլ երկրներում առկա կապերի վերաբերյալ տեղեկատվությունը: Ուշադրություն է դարձվում անձի այնպիսի կապերին կամ գործունեությանը, որը ունի որոշակի ռիսկայնություն և ապագայում կարող է հանգեցնել կոռուպցիոն դրսևորումների: Բարեվարքության ստուգման ենթարկվում են հինգ տարին մեկ անգամ, բացառությամբ գլխավոր դատախազի և նրա տեղակալների:

ՄԱԿ

«ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի տեխնիկական ուղեցույցում»[40] նշվում է, որ անհրաժեշտ է ապահովել հակակոռուցիոն դատախազների բարեվարքության երաշխավորման մեխանիզմներ, նախատեսել դախատազների անկախության և անաչառության ապահովման արդյունավետ կառուցակարգեր: Նշված փաստաթղթով կարևորվում է նաև հակակոռուպցիոն մարմինների պաշտոնատար անձանց ընտրության, նշանակման, կարգապահական պատախանատվության ենթարկման և ազատման առանձնահատուկ ընթացակարգերի սահմանումը, որոնց կերաշխավորեն նշված գործընթացների թափանցիկությունը և անաչառությունը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների գործերով պատասխանատու պաշտոնատար անձանց անկախությունը և բարեվարքության բարձր մակարդակը:

ԳՐԵԿՈ

Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) «Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանակում կոռուպցայի կանխարգելման ուղղված գործողությունների վերաբերյալ եզրահանգումները և միտումները» խորագրով 2017 թվականի զեկույցում կարևորություն է տրվում դատախազների թեկնածությունների ընտրության փուլում մրցութային թափանցիկ և անաչառությանը, ինչպես նաև բարեվարքության երաշխավորման մեխանիզմներ ապահովելու անհրաժեշտությանը[41]:

ՏՀՁԿ

---

[40] Տե՛ս https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/TechnicalGuide/09-84395_Ebook.pdf

[41] Տե՛ս https://rm.coe.int/corruption-prevention-members-of-parliament-judges-and-prosecutors-con/16807638e7, էջեր 25-27.

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցը Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության 4-րդ փուլի գնահատման[42] արդյունքներով խորհուրդ է տրվում ապահովել հակակոռուպցիոն իրավապահ մարմինների ղեկավարների թափանցիկ և մրցակցային ընտրություն՝ թեկնածուների արժանիքների և մասնագիտական որակների հաշվառմամբ: Հայաստանին առաջարկվում է ձեռնարկել հստակ միջոցներ՝ ապահովելու դատախազության համակարգի անկախությունն ու բարեվարքությունը և ըստ այդմ՝ բարձրացնել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտելու, դրանք քննելու և այդ գործերով հետապնդում իրականացնելու ընթացակարգերի արդյունավետությունը[43]:

ՄԻԵԴ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Xhoxhaj vs. Albania գործի շրջանակներում քննարկելով բարեվարքության ստուգում անցած դատավորին աշխատանքից ազատելու հարցի քննարկման շրջանակներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավորներն իրենց աշխատանքի բնույթով համարվում են օրենքի գերակայության երաշխավորներ, ուստի պետք է պահանջվի, որ նրանք համապատասխանեն ազնվության առավել բարձր չափանիշների նրանց անձնական կյանքում՝ նպատակ ունենալով պահպանելու և բարձրացնելու հասարակության վստահությունը և «վերահաստատելու ժողովրդի հավատը դատական համակարգի ամբասիրության նկատմամբ»[44]: Սույն գործի շրջանակներում ՄԻԵԴ-ը իրավաչափ է համարել բարեվարքության ստուգումը և դրա բացասական արդյունքների դեպքում պաշտոնից ազատումը:

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները և ոլորտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավակարգավորումները, պարզ է դառնում, որ այն հանրային կերպարները, որոնք իրենց զբաղեցրած պաշտոնով, սոցիալական դիրքով հանդես են գալիս որպես օրենքի գերակայության երաշխավոր, հանդես են գալիս պետության անունից, պետք է անցնեն բարեվարքության ստուգում, որպեսզի իրենց անձով, այն բնութագրող հատկանիշներով և գործունեությամբ վայելեն հասարակության վստահությունը,

---

[42] Տե՛ս https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf էջ 14,

[43] Տե՛ս https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

[44] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/eng#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-208053%22]}, 12.03.2021թ.:

ապահովեն, կամ առնվազն՝ չխոչընդոտեն հասարակության և պետական մարմինների ներդաշնակ պայքարին ընդդեմ կոռուպցիոն երևույթների: Համապատասխանաբար, բարեվարքության ստուգումը ոչ միայն թույլատրելի է, այլև՝ անհրաժեշտ, որպեսզի կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարը ընթանա բնականոն փուլով, իսկ պայքարը իրականացնողները, այդ թվում՝ դատախազները, պետք է ունենան ամբասիր վարքագիծ, բարեվարքության կանոնների որևէ խախտում անթույլատրելի է, քանի որ հակառակ դեպքում ոչ միայն կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարը էականորեն պակաս արդյունավետ կլինի, այլև՝ հանրության ներկայացուցիչները կխուսափեն համապատասխան պետական ինստիտուտների հետ համագործակցությունից՝ վստահության պակասի կամ բացակայության պատճառով:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Ակնհայտ է, որ կոռուպցիոն բնույթի գործերով մասնագիտացված քննությունը նոր հարթակի վրա է դնելու կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի արդյունավետության աստիճանը: Միաժամանակ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում ևս մասնագիտացվածությունն ապահովելու նպատակով՝ Նախագծով առաջարկվում է ստեղծել մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան՝ առնվազն 15 դատավորի թվակազմով, որոնցից 10-ը կքննեն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը, իսկ 5-ը՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (այսուհետ՝ նաև պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործեր):

Նախագծով առաջարկվում է նաև, որ Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ քաղաքացիական դատարաններում 6-ական դատավորներ իրավասու լինեն քննել հակակոռուպցիոն դատարանի կայացրած դատական ակտերի, իսկ վերաքննիչ քրեական դատարանի 6 դատավորները՝ նաև կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կայացրած դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները:

Նախագծով միաժամանակ սահմանվել են հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման

բաժնի համալրման կարգը, առաջին կազմերի դատավորներին ներկայացվող պահանջները:

Նախագծով սահմանվել են նաև հակակոռուպցիոն դատարանի դատավոր նշանակվելու ավելի խիստ սահմանափակումներ: Մասնավորապես՝ սահմանափակումներ են նախատեսվել դատավորի, նախկին դատավորի, դատախազի, նախկին դատախազի, քննիչի, նախկին քննիչի, հետաքննիչի, նախկին հետաքննիչի, օպերլիազորի, նախկին օպերլիազորի, փաստաբանի և նախկին փաստաբանի համար, եթե վերջիններս վերջին երեք տարվա ընթացքում ստացել են նախագծով նշված կարգապահական տույժերից մեկը՝ անկախ օրենքով սահմանված կարգով դրա հանված կամ մարված լինելու հանգամանքից:

Հաշվի առնելով հակակոռուպցիոն դատարանների դերը և ստեղծման գործընթացում առավելագույն թափանցիկություն ապահովելու անհրաժեշտությունը՝ նախագծով սահմանվել է, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համալրման գործընթացին ներգրավվում է 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ: Նախագծով սահմանվել են փորձագետների իրավունքները և պարտականությունները՝ նախատեսելով նաև դրույթ առ այն, որ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում փորձագետների կարծիքները:

Միտում ունենալով հակակոռուպցիոն դատարանների կազմում ներգրավվելու նաև փորձառու մասնագետների, այն է՝ գործող դատավորների, նախկին դատավորների, իրավաբան գիտնականների, վերջիններիս համար սահմանվել է հավակնորդների ցուցակում ընդգրկվելու պարզեցված կարգ՝ բացառելով գրավոր քննության փուլը: Հավակնորդների ցուցակում ընդգրկված անձինք ուսումնառություն են անցնելու ՀՀ արդարադատության ակադեմիայում:

Նախագծով սահմանվել է նաև դրույթ, առ այն, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համալրման անցկացման կարգի առանձնահատկությունները, այդ թվում՝ փորձագետներ պարտադիր ներգրավելու կարգավորումները գործելու են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

Միևնույն ժամանակ, որպես գործունեության լրացուցիչ երաշխիք, հակակոռուպցիոն դատարանի, ինչպես նաև՝ Վերաքննիչ քաղաքացիական և Վերաքննիչ քրեական դատարանների հակակոռուպցիոն բնույթի գործեր քննելու իրավունք ունեցող դատավորների համար նախագծերի փաթեթով առաջարկվում է նախատեսել հավելումներ ստանալու հնարավորություն՝ պայմանավորված գործունեության ռիսկայնության հետ: Ընդ որում, Նախագծի անցումային դրույթներով սահմանվում է կարգավորում, որը հնարավորություն կտա Վճռաբեկ դատարանի դատավորների համար ևս, Բարձրագույն դատական խորհրդի կողմից համապատասխան առաջարկության ներկայացման և իրավաչափ նպատակի ու օբյեկտիվ չափանիշների սահմանման դեպքում դիմել կառավարություն և ստանալ վերջինիս համաձայնությունը՝ հավելումներ նախատեսելու վերաբերյալ: Այս մոտեցումը լիովին արդարացնում է Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը Ուկրաինայի բարձրագույն հակակոռուպցիոն դատարանների օրենքի նախագծի վերաբերյալ իր 2017 թվականի հոկտեմբերի 9-ին տրված թիվ 896/2017 կարծիքով, որի շրջանակներում մասնավորապես նշվում է, որ ողջամտության սահմաններում ու հիշատակված հիմքերի առկայության դեպքում մասնագիտացված դատավորների համար կարող է սահմանվել առավել բարձր աշխատավարձ՝ որ «Թիվ 6011 օրենքի նախագծի համաձայն հակակոռուպցիոն դատավորների վարձատրության հատուկ համակարգը պետք է վերանայել: Մի կողմից, պարզ է, որ այդ դատավորները պետք է ունենան իրավունք ավելի բարձր աշխատավարձի, քան առաջին ատյանի դատարանների ընդհանուր մասնագիտացման դատավորները, և պետք է նաև հաշվի առնել, որ նրանք աշխատում են կարևոր կոռուպցիոն դեպքերի վրա և կարող են հայտնվել արտաքին զգալի ճնշման տակ, ԵԴԽԽ-ն ընդունում է հատուկ վարձատրության հնարավորությունը, «եթե հատուկ հիմքեր կարելի է առանձնացնել, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ կա՞մ մասնագետ դատավորի մասնագիտության առանձնահատկությունները, կա՞մ նրա պարտականությունների բեռը (ներառյալ անձնական բեռը, որը կարող է լինել՝ ծագած մասնագետի գործառույթի յուրահատկությամբ) պահանջում են այդպիսի վարձատրություն:»[45]:

Այսպիսով պարզ է դառնում, որ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը հաստատել է, որ ողջամտության սահմաններում ու հիշատակված հիմքերի առկայության դեպքում մասնագիտացված դատավորների համար կարող է սահմանվել առավել բարձր աշխատավարձ: Իսկ ինչպես պարզ է դառնում, սույն փաստաթղթի ուսումնասիրությունից՝ հակակոռուպցիոն մասնագիտացման

[45] Տե՛ս https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2020)063-e, 12.03.2021թ.

դատավորներին ներկայացվում են առավել խիստ պահանջներ, վերջիններիս աշխատանքը կապված է լինելու առավել ռիսկային, արտաքին ազդեցության տեսակյունից խոցելի ոլորտի հետ, ինչն արդարացնում է հակակոռուպցիոն դատավորների համար առավել բարձր վարձատրության նախատեսումը:

Դատական համակարգում բարեվարքության ամրապնդման առումով նախագծով առաջարկվում է բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ սահմանել ոչ միայն դատավորների թեկնածուների հավակնորդների, այլև վճռաբեկ դատարանի դատավոր դառնալու նպատակով առաջխաղացման ցուցակում ընդգրկվող անձանց համար:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ սահմանել նաև դատախազների թեկնածուների և կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հետագայում հսկողություն իրականացնող դատախազների համար, ինչը կնպաստի դատախազության համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազմանը և բարեվարքության ամրապնդմանը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագծերի փաթեթը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է ստեղծել հակակոռուպցիոն դատարան, ինչպես նաև հակակոռուպցիոն բնույթի գործերի քննությունը Վերաքննիչ քաղաքացիական և Վերաքննիչ քրեական դատարաններում վերապահել 6-ական առանձին դատավորների, որով կապահովվի կոռուպցիոն բնույթի գործերի մասնագիտացված քննությունը՝ ըստ այդմ բարձրացնելով դատաքննության արդյունավետությունը:

Միաժամանակ ակնկալվում է դատախազների բարեվարքության ուսումնասիրության համար ներդնել արդյունավետ մեխանիզմներ:

Կ-785-25.11.2020-ՊԻ-011/1

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի թիվ ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի~~՝~~

~~1)~~ 3-րդ մասում լրացնել նոր՝ 3-րդ կետ.

«3) հակակոռուպցիոն դատարանը:»:

~~2) 4-րդ մասում լրացնել նոր՝ 4-րդ կետ.~~

~~«4) վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը:»:~~

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս.

«3. Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով հակակոռուպցիոն դատարանների իրավասությանը վերապահված գործերը, ինչպես նաև~~եւ~~ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային եւ ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով ~~եւ~~և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (այսուհետ՝ նաեւ հակակոռուպցիոն ~~պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված~~ քաղաքացիական գործեր):»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս.

«3. Հակակոռուպցիոն դատարանը գործում է առնվազն ~~25~~ 15 դատավորի թվակազմով, որից առնվազն ~~2~~10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-ը՝ ~~պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված~~հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ:»:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում~~ լրացնել նոր՝ 4-րդ կետ~~.

1) 1-ին կետում «16» թիվը փոխարինել «22» թվով:
2) 2-րդ կետում «18» թիվը փոխարինել «24» թվով:

~~«4) վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը՝ առնվազն 10 դատավորի թվակազմով:»:~~

Հոդված 6. ~~Օրենքում լ~~Լրացնել հետ~~եւ~~և յալ բովանդակությամբ՝ 28.1-ին հոդված.

«*Հոդված 28.1.* **Վերաքննիչ դատարաններում հակակոռուպցիոն գործերի քննությունը** ~~*հակակոռուպցիոն դատարանների դատավորների մասնագիտացումը*~~

1. Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը վերանայում են Վերաքննիչ քրեական դատարանի առնվազն 6 թվակազմով առանձին դատավորները:

~~Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում գործը քննում են կոռուպցիոն հանցագործությունների քննության կամ պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործերով քննության մասնագիտացում ունեցող դատավորները:~~

2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը վերանայում են Վերաքննիչ քաղաքացիական դատարանի առնվազն 6 թվակազմով առանձին դատավորները:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավորները, ի լրումն նույն մասով նախատեսված գործերի, վերանայում են նաև սույն օրենսգրքով Վերաքննիչ քրեական դատարանին վերապահված այլ գործեր:
4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավորները, ի լրումն նույն մասով նախատեսված գործերի, վերանայում են նաև սույն օրենսգրքով Վերաքննիչ քաղաքացիական դատարանին վերապահված այլ գործեր:

~~Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը գործում է կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացման առնվազն 6, իսկ պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործերով մասնագիտացման՝ դատավորի առնվազն 4 դատավորի թվակազմով:»:~~

Հոդված 7. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) քրեական պալատ՝ 8 դատավորի թվակազմով.»:

~~Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում՝~~

~~1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«1) քրեական պալատը՝ 8 դատավորի թվակազմով, որոնք համարվում են քրեական, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացում ունեցող.».~~

~~2) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«2) քաղաքացիական եւ վարչական պալատը՝ 13 դատավորի թվակազմով, որոնք համարվում են միաժամանակ քաղաքացիական, այդ թվում՝ պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործերով քննության, եւ վարչական մասնագիտացումներ ունեցող»:~~

Հոդված 8. Օրենքի 43-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2.1-ին մասով.

«2.1. Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվում են միայն Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի վերանայման գործերը՝ միայն Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև:»:

Հոդված 9. Օրենքի 45-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2.1-ին մասով.

«2.1.Սույն օրենսգրքի 43-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դատավորների համար Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ:»:

Հոդված 10. Օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր» բառերը:

~~*Հոդված 8.* Օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասում «ութ» բառը փոխարինել «ինը» բառով, «վեցը» բառը՝ «յոթը» բառով, իսկ «անդամներից» բառից հետո «երկուսն» բառը փոխարինել «երեքն» բառով:~~

Հոդված 11~~9~~. Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևեալ բովանդակությամբ 44.1-րդ կետ.

«44.1) դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների մասնակցության անհրաժեշտության դեպքում սահմանում է փորձագետների ներգրավման կարգը և նրանց ներկայացվող պահանջները.»:

~~«44.1) անհրաժեշտության դեպքում հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին ներգրավում է փորձագետներ եւ սահմանում փորձագետների ներգրավման կարգը եւ նրանց ներկայացվող պահանջները.»:~~

Հոդված 12~~10~~. Օրենքի 95-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «և վարչական» բառերը փոխարինել «, վարչական և հակակոռուպցիոն» բառերով.

բ. լրացնել նոր նախադասություն.

«Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ներառվում են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն~~պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված~~ քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինները:».

2) 2-րդ և 3-րդ մասերում «վարչական մասնագիտացման բաժնում» բառերը փոխարինել «վարչական և հակակոռուպցիոն մասնագիտացման բաժիններում» բառերով.

~~3) 5-րդ մասում «բաժինների» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի հղումը» բառերը:~~

Հոդված 13~~1~~. Օրենքի 103-րդ հոդվածի~~ի 1-ին մաս~~ում՝

1) 1-ին մասում՝ «կամ վարչական» բառերը փոխարինել «, վարչական կամ հակակոռուպցիոն» բառերով.

2) լրացնել նոր 3.1-ին մաս~~ նախադասություն~~.

«3.1 Հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներ մշակելիս կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացմանը հիմնահարցերը ներառվում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի, իսկ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում:»:

~~Հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներն ուղղված են ոլորտային օրենսդրության, այդ թվում՝ վերաբերելի եւ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերի իմացության ստուգմանը: Կոռուպցիոն հանցագործությունների, փողերի լվացմանը, քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային եւ ոչ գույքային շահերի պաշտպանությանը եւ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը ներառվում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համապատասխան ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում:»:~~

Հոդված 14~~2~~. Օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասում «ցուցակ» բառից հետո լրացնել «իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ,» բառերով:

Հոդված 15~~3~~. Օրենքի 112-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1.-ին և 1.2-ր~~դ~~ մասեր.

«1.1. Հակակոռուպցիոն դատարանի ~~եւ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի~~ դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

1) որի վրա տարածվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները.

2) որը, լինելով դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան կամ նախկին դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝

անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

1.2) Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված սահմանափակումները տարածվում են նաև Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների թեկնածուների նկատմամբ:»:

~~որը, լինելով դատավոր կամ նախկին դատավոր, վերջին հինգ տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն, առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական եւ արտահերթ համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք՝ մեկ տարի ժամկետով, դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում կամ էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժերից մեկը՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.~~

~~3) որը, լինելով դատախազ, քննիչ, նախկին դատախազ կամ նախկին քննիչ վերջին հինգ տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով կամ պաշտոնից ազատում կարգապահական տույժերից մեկը՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.~~

~~4) որը, լինելով հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ կամ նախկին օպերլիազոր, վերջին հինգ տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն, գերատեսչական կրծքանշանից զրկում, նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին, զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով, հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի հասցեում՝ մեկ ամսից մինչեւ վեց ամիս ժամկետով, զինվորական ծառայությունից արձակում, հիմնական աշխատավարձի իջեցում մինչեւ 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը կամ ծառայության դադարեցում կարգապահական տույժերից մեկը, 10-50 տոկոսով պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչեւ 3 ամիս ժամանակով, պաշտոնի իջեցում մեկ աստիճանով, կոչման իջեցում մեկ աստիճանով կամ ոստիկանությունից ազատում կարգապահական տույժերից մեկը՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.~~

~~5) որը, լինելով փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին հինգ տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն, մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների, տուգանք կամ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում կարգապահական տույժերից մեկը՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:»:~~

Հոդված 164. Օրենքի 115-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին, 3-րդ եւ 5-րդ կետերում «տարիքով ավագ» բառերը փոխարինել «առավել երկար փորձառություն ունեցող» բառերով.

2) 2-րդ կետում «տարիքով ավագին» բառերը փոխարինել «առավել երկար փորձառություն ունեցող դատավորին» բառերով.

3) 4-րդ կետում «տարիքով ավագին» բառերը փոխարինել «առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին» բառերով:

~~***Հոդված 15.*** Օրենքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «եւ վարչական» բառերը փոխարինել «, վարչական եւ հակակոռուպցիոն» բառերով:~~

~~***Հոդված 16.*** Օրենքի 123-րդ հոդվածում՝~~

~~1) 1-ին մասում «եւ վարչական» բառերը փոխարինել «, վարչական եւ հակակոռուպցիոն» բառերով.~~

~~2) 3-րդ մասում «բաժինների» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի հղումը» բառերը:~~

~~***Հոդված 17.*** Օրենքի 124-րդ հոդվածում՝~~

~~1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«1. Դիմումներ ընդունելու ժամկետի ավարտից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը՝ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է թեկնածուի անձնական գործը, իսկ դատավոր չհանդիսացող թեկնածուի դեպքում՝ նրա ներկայացրած եւ դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաեւ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, անհրաժեշտության դեպքում հրավիրում նրան զրույցի:».~~

~~2) 2-րդ մասում «որակները,» բառից հետո լրացնել «թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը,» բառերը.~~

~~3) 5-րդ մասում «մասնագիտացման բաժնի» բառերից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի դեպքում՝ յուրաքանչյուր ենթաբաժնի» բառերը.~~

~~4) 6-րդ մասում «դատավորների թեկնածուների ցուցակ,» բառերից հետո լրացնել «իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ,» բառերը:~~

Հոդված 1~~8~~7. Օրենքի 132-րդ հոդվածում՝

~~1) 1-ին մասում «քանակը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի հղումը, » բառերը.~~

~~2)~~ լրացնել նոր՝ 4.1.-րդ մաս.

«4.1. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված անձը դիմումին կցում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը:»:

Հոդված 18~~19~~. Օրենքի 133-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Դիմումներ ընդունելու ժամկետի ավարտից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Բարձրագույն դատական խորհուրդը՝ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է թեկնածուի անձնական գործը, իսկ դատավոր չհանդիսացող թեկնածուի դեպքում՝ նրա ներկայացրած եւ դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը, ~~ինչպես նաեւ~~ այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց զրույցի:».

2) 2-րդ մասում «որակները,» բառից հետո լրացնել «թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը,» բառերը:

Հոդված 19. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների թվակազմն ավելացնելու համաձայնություն ստանալու համար դիմում է Կառավարություն՝

1) հակակոռուպցիոն դատարանում՝ տասնհինգ դատավորով.
2) վերաքննիչ քրեական դատարանում՝ վեց դատավորով.
3) վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ վեց դատավորով.
4) վճռաբեկ դատարանի քրեական պալատում՝ երկու դատավորով:

3. Կառավարության համաձայնությունը հնգօրյա ժամկետում ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը ավելացնում է դատավորների թվակազմը:
4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է Հակակոռուպցիոն դատարանի նստավայրերը և դրանց սպասարկման տարածքը, հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի բաշխումն ու թվակազմը:
5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման, Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների

թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման անհրաժեշտության և իրականացման կարգի մասին՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրումն իրականացվում է Օրենսգրքի ընդհանուր կանոններով: Սույն մասով նախատեսված որոշմամբ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է նաև թեկնածուների ցուցակի համալրման, այդ թվում՝ որակավորման ստուգման առանձին փուլերի և դրանց շրջանակներում իրականացվող գործողությունների հատուկ ժամկետներ՝ այն հաշվառմամբ, որ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգումը, ուսուցումը և դատավորների թեկնածուների ցուցակի հաստատումն իրականացվի դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ առավելագույնը հնգամսյա ժամկետում:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում և հրապարակում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը (որը չի կարող պակաս լինել ընդհանուր միավորների 60 տոկոսից): Որակավորման գրավոր քննության կազմակերպումն իրականացվում է Օրենքի 100-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմի համալրումն իրականացվում է օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

8. Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակում ընգրկվելու համար դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման՝ Արդարադատության ակադեմիան ավարտած բարեվարքության ուսումնասիրություն չանցած թեկնածուները, վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանների համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորները, առաջին ատյանի դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորները հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելու համար ներկայացնում են դիմում՝ կցելով միայն Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը, որը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Սույն մասով նախատեսված անձինք սույն հոդվածով սահմանված կարգով հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների հետ մասնակցում են հարցազրույցների:

9. Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար ներկայացվող դիմումին կցվում է Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը, որը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի արտահերթ առաջին համալրման նպատակով սույն հոդվածով սահմանված կարգով անցկացվում են հարցազրույցներ:

10. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման կարգը՝ սույն հոդվածի 11-15-րդ մասերով սահմանված կարգին համապատասխան: Հակակոռուպցիոն դատարանի և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների առաջխաղացման ենթակա համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման նպատակով հարցազրույց անցկացնելու օրվան նախորդող տասն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան հարցազրույցից հինգ օր առաջ Դատական Դեպարտամենտը կազմակերպում է հավակնորդների նախնական հարցազրույցը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ներգրավված փորձագետների հետ:

11. Որպես փորձագետ կարող են ընտրվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ: Փորձագետներից մեկը պետք է լինի ազգային փորձագետ, իսկ երկուսը՝ առաջադրվեն վերջին երկու տարում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կամ միավորումների կողմից: Ազգային փորձագետի վարձատրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, իսկ Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կամ միավորումների կողմից առաջադրած փորձագետներինը՝ տվյալ կազմակերպությունների կամ միավորումների կողմից:

12. Բարձրագույն դատական խորհուրդը նախնական հարցազրույցից հինգ օր առաջ փորձագետներին է տրամադրում հավակնորդների անձնական գործը, որում պետք է ներառվեն որակավորման ստուգմանը մասնակցելու հայտին կից հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը, գրավոր քննության արդյունքով ստացած միավորները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը և Օրենսգրքի 107-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները:

13. Նախնական հարցազրույցի նպատակը փորձագետների կողմից հավակնորդի դատավոր դառնալու շարժառիթի ու ակնկալիքի, անձնական հատկանիշների (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ), դատավորի վարքագծի կանոններին, շահերի բախմանը վերաբերող իրավիճակում ձեռնարկվելիք գործողությունների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական

եզրակացության տվյալների առնչությամբ հարցեր տալու միջոցով հավակնորդի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդին կարծիքի տրամադրումն է:

14. Փորձագետները նախնական հարցազրույցի արդյունքում կազմում և հարցազրույցից առնվազն երկու օր առաջ Բարձրագույն դատական խորհուրդ են ներկայացնում հավակնորդի վերաբերյալ գրավոր խորհրդատվական կարծիք:

15. Փորձագետները պարտավորվում են չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել հավակնորդների վերաբերյալ իրենց հայտնի դարձած հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները:

16. Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների առաջխաղացման ենթակա համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում նաև փորձագետների ներկայացրած գրավոր խորհրդատվական կարծիքը:

17. Սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցումը և փորձաշրջանն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով և Ակադեմիայի կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված կարգով՝ երկամսյա ժամկետում:

18. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, հակակոռուպցիոն դատարանի դատավորի, ինչպես նաև Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների թափուր պաշտոնների համալրումն իրականացվում է սույն հոդվածի 16-րդ մասով սահմանված դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուներից, իսկ ցուցակը սպառվելու դեպքում՝ Օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

19. Հակակոռուպցիոն դատարանն սկսում է գործել կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ լոթ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ երեք դատավորների նշանակման պահից:

20. Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները այդ պաշտոնում պաշտոնավարումն սկսում են սույն հոդվածով սահմանված կարգով չորսական առանձին դատավորներ նշանակվելու պահից:

21. Սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված ժամկետից հետո մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը ընդունում է որոշում գործերի վերաբաշխման մասին:

22. Սույն հոդվածի 19-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվում են բացառապես հակակոռուպցիոն դատարանի կողմից:

23. Սույն հոդվածի 20-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են Հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ:

25. Սույն հոդվածի 20-րդ մասով նախատեսված դատավորների նշանակումից հետո Հակակոռուպցիոն դատարանի կայացրած կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ դատական ակտերի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կայացրած դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներն սկսում են քննել Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները, իսկ Հակակոռուպցիոն դատարանի կայացրած հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերը, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կայացրած դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները սկսում են քննել Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները:

1.

Որպես փորձագետ կարող են ընտրվել

Հոդված 20. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Հակակոռուպցիոն դատարանը սկսում է գործել կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ 10 եւ պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ 3 դատավորների նշանակման պահից:

3. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը սկսում է գործել յուրաքանչյուր մասնագիտացմամբ երեքական դատավորների նշանակման պահից:

4. Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, սահմանում է վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու հայտի ձեւ:

~~5. Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում սահմանում է Հակակոռուպցիոն դատարանի նստավայրերի սպասարկման տարածքը եւ հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի եւ մասնագիտացման բաշխումն ու թվակազմը:~~

~~6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով հայտարարություն է հրապարակում Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի եւ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի առաջխաղացման ենթակա դատավորների եւ Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակների արտահերթ համալրման անհրաժեշտության մասին:~~

~~7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառասունօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում եւ հրապարակում է հակակոռուպցիոն դատարանի եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանների դատավորների հավակնորդների որակավորման գրավոր քննության ձեւը, քննական հարցերի կառուցվածքի եւ բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման եւ անցկացման կարգը, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը (որը չի կարող պակաս լինել ընդհանուր միավորների 60 տոկոսից): Որակավորման գրավոր քննության կազմակերպումն իրականացվում է Օրենքի 100-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

~~8. Հակակոռուպցիոն դատարանի եւ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմի ընտրությունը եւ նշանակումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:~~

~~9. Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման՝ Արդարադատության ակադեմիան ավարտած թեկնածուները, վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանների համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորը, առաջին ատյանի դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորը որակավորման ստուգմանը մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում ազատվում են գրավոր քննության փուլից:~~

~~10. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված անձանցից բացի՝ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում կարող է ընդգրկվել դատավորի թեկնածուի հավակնորդին Օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող այն անձը, ով ունի իրավաբանի մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքի առնվազն յոթ տարվա փորձառություն:~~

~~11. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման կարգը: Հակակոռուպցիոն դատարանի եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի~~

~~համալրման նպատակով հարցազրույց անցկացնելու օրվան նախորդող տասն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան հարցազրույցից հինգ օր առաջ Բարձրագույն դատական խորհուրդը կազմակերպում է հավակնորդների նախնական հարցազրույցը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ներգրավված փորձագետների հետ:~~

~~12. Որպես փորձագետ կարող են ներգրավվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ: Ընդ որում, փորձագետներից մեկը պետք է լինի ազգային փորձագետ, իսկ երկուսը՝ նշանակվեն վերջին երկու տարում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կազմակերպությունների կամ միավորումների կողմից: Ազգային փորձագետի վարձատրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, իսկ Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կազմակերպությունների կամ միավորումների կողմից նշանակված փորձագետներինը՝ տվյալ կազմակերպությունների կամ միավորումների կողմից:~~

~~13. Բարձրագույն դատական խորհուրդը նախնական հարցազրույցից հինգ օր առաջ փորձագետներին է տրամադրում հավակնորդների անձնական գործը, որում պետք է ներառվեն որակավորման ստուգմանը մասնակցելու հայտին կից հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը, գրավոր քննության արդյունքով ստացած միավորները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը եւ Օրենսգրքի 107-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները:~~

~~14. Նախնական հարցազրույցի նպատակը փորձագետների կողմից հավակնորդի դատավոր դառնալու շարժառիթի ու ակնկալիքի, անձնական հատկանիշների (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնեական եւ արտապաշտոնեական հարաբերություններում, արդարամտություն, վերլուծական կարողություններ եւ դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ), դատավորի վարքագծի կանոններին, շահերի բախմանը վերաբերող իրավիճակում ձեռնարկվելիք գործողությունների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների առնչությամբ հարցեր տալու միջոցով հավակնորդի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդին կարծիքի տրամադրումն է:~~

~~15. Փորձագետները նախնական հարցազրույցի արդյունքում կազմում եւ հարցազրույցից առնվազն երկու օր առաջ բարձրագույն դատական խորհուրդ են ներկայացնում հավակնորդի վերաբերյալ գրավոր խորհրդատվական կարծիք:~~

~~16. Փորձագետները պարտավորվում են չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել հավակնորդների վերաբերյալ իրենց հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունները:~~

~~17. Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում նաեւ փորձագետների ներկայացրած գրավոր խորհրդատվական կարծիքը:~~

~~18. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, հակակոռուպցիոն դատարանի եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորի թափուր պաշտոնների համալրումն իրականացվում է Օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:~~

~~19. Հակակոռուպցիոն եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանների գործարկումից հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության եւ վերաքննիչ դատարանների վարույթում գտնվող եւ հակակոռուպցիոն եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարաններին ենթակա գործերը փոխանցվում են հակակոռուպցիոն եւ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարաններին: Այն դեպքում, երբ գործը գտնվել է հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնում նշանակված առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի վարույթում եւ նա շարունակում է քննել փոխանցված գործը, Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը կիրառելի չէ:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ Կ-785-25.11.2020-ՊԻ-011/1 ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և	Առաջարկվում է հանել վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի վերաբերյալ իրավակարգավորումը՝ գործերի վերանայումը վերապահելով վերաքննիչ քաղաքացիական և վերաքննիչ քրեական դատարանների առանձին դատավորների:	Ընդունվել է	Ընդունվել է

		լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 1			
2.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 3	Առաջարկվում է «պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»	Առաջարկվում է փոփոխել Հակակոռուպցիոն դատարանի դատավորների նվազագույն թիվը՝ 25-ից դարձվելով 15, հակակոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով	Ընդունվել է	Ընդունվել է

		սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 4	մասնագիտացմամբ դատավորների նվազագույն թիվը՝ 20-ից դարձվելով 10, ինչպես նաև «պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն» բառով:		
4.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 5	Առաջարկվում է 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «16 թիվը» փոխարինել «22» թվով, իսկ «18» թիվը՝ «24» թվով :	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության	Առաջարկվում է 28.1-ին հոդվածի վերանագիրը և բովանդակությունը	Ընդունվել է	Ընդունվել է

		դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 6	համապատասխանեցնել Վերաքննիչ քաղաքացիական և Վերաքննիչ քրեական դատարանների հակակոռուպցիոն գործեր քննելու իրավունք ունեցող դատավորների միջոցով արդարադատություն իրականացնելու մեխանիզմներին:		
6.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 7	Առաջարկվում է քրեական պալատի դատավորների թվակազմը դարձնել 8, իսկ մնացյալ փոփոխությունները՝ հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

7.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 8	Առաջարկվում է 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ: Տվյալ փոփոխությամբ կարգավորվում են Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ քաղաքացիական դատարաններում գործերի բաշխման կանոնները:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ,	Առաջարկվում է Օրենքի 45-րդ հոդվածը լրացնել 2.1-ին մասով, որով սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի հնարավորությունը սահմանելու հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ՝ օրենսգրքի 43-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դատավորների համար:	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված 9			
9.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 10	Առաջարկվում է օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Առաջարկվում է հոդվածը լրամշակել՝ սահմանելով, որ Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների մասնակցության անհրաժեշտության դեպքում սահմանում է փորձագետների ներգրավման կարգը և նրանց ներկայացվող պահանջները:	Ընդունվել է	Ընդունվել է

		սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 11			
11.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 12	Առաջարկվում է «պետական շահերի պաշտպանության հայցերով հարուցված» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն» բառով, 3-րդ մասի իրավակարգավորումները հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և	Նախագծի 13-րդ հոդված առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 103-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ. «Հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներ	Ընդունվել է	Ընդունվել է

		լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 13	մշակելիս կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացման հիմնահարցերը ներառվում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի, իսկ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում:»:		
13.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում	Առաջարկվում է հոդվածը վերախմբագրել (նախկինում՝ հոդված 12) և 1.1-ին մասից հանել «և Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի» բառերը, 1.1 մասում ավելացնել 2-րդ կետ հետևյալ բովանդակությամբ. «որը, լինելով դատավոր, դատախազ, քննիչ,	Ընդունվել է	Ընդունվել է

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 15	հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան կամ նախկին դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:» Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 112-րդ հոդվածում լրացնել 1.2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված սահմանափակումները տարածվում են նաև Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական		

			գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների թեկնածուների նկատմամբ:»: Առաջարկվում է Նախագծի 15-րդ հոդվածից հանել 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի կարգավորումները:		
14.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 17	Առաջարկվում է Նախագծի 17-րդ հոդվածի (Նախկինում՝ հոդված 18) 1-ին մասը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական	Առաջարկվում է Նախագծի հոդված 19-ը (նախկինում՝ հոդված 20) այն է՝ Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթները	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 19	շարադրել նոր խմբագրությամբ:		
16.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	Նախագծում առաջարկվում է կատարել խմբագրական փոփոխություններ՝ պայմանավորված Նախագծում՝ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանահատվածում իրականացված փոփոխություններով:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	Կառավարություն	«Ազգային ժողովի կանոնակարգ»	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ»	Ընդունվել է	Ընդունվել է

		սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ հոդված 1	սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 3-րդ մասում «պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը» բառերը:		
19.	Կառավարություն	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ հոդված 2	Առաջարկվում է Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 3-րդ մասում «պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
20.	Կառավարություն	«Ազգային ժողովի	Նախագծում առաջարկվում է կատարել նաև	Ընդունվել է	Ընդունվել է

		կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	խմբագրական փոփոխություններ, այն է՝ փոփոխել հոդվածների համարակալումը: Հոդված 3-ի 1-ին մասում առաջարկվում է հանել «3-րդ նախադասությունում» բառերը, «փաստաթղթերը» բառերից առաջ լրացնել «պահանջների ապահովումը հավաստող» բառերը:		
21.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության օրենքը քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 1	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասից հանել «(բացառությամբ հակակոռուպցիոն դատարանի կողմից քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող վերահսկողությունը)» բառերը: Նույն հոդվածի 3-րդ մասից հանել «(նյութերը), ինչպես նաև վերահսկողություն իրականացնելու այդ գործերով մինչդատական վարույթի նկատմամբ.» բառերը: Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը հանել, ըստ այդմ խմբագրելով հոդվածի մասերի համարակալումները:	Ընդունվել է	Ընդունվել է

22.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության օրենքը քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդվածներ 2, 3	Առաջարկվում է նախագծից հանել 2-րդ և 3-րդ հոդվածները:	Ընդունվել է	Ընդունվել է
23.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության օրենքը քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածի (նախկինում՝ հոդված 2) 1-ին մասում «բացառությամբ հակակոռուպցիոն դատարանի կողմից քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող վերահսկողության:» բառերը հանել: Առաջարկվում է նույն հոդվածի 2-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

		լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 4	մասից հանել «ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ» բառերը:		
24.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության օրենքը քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 5	Առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
25.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության օրենքը քրեական	Առաջարկվում է վերանայել նախագծի 10-րդ (նախկինում՝ հոդված 7) հոդվածով ամրագրված անցումային դրույթները:	Ընդունվել է	Ընդունվել է

		դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 10			
26.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության օրենքը քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծում կատարել խմբագրական բնույթի փոփոխություններ, մասնավորապես՝ վերանայել հոդվածների համարակալումը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որոշ հոդվածներ հանվել են նախագծից:	Ընդունվել է	Ընդունվել է
27.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով փոփոխել քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Սույն	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 1	օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանում (այսուհետ՝ հակակոռուպցիոն դատարան) պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության, ինչպես նաև մինչև գործի հարուցումն առանձին դատավարական գործողությունների կատարման նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով:»:		
28.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Նախագիծը լրացնել 2-րդ 3-րդ 4-րդ 5-րդ հոդվածներով: Նշված հոդվածներով համապատասխանաբար փոփոխություն է իրականացվում քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ 25-րդ 26-րդ և 127-րդ հոդվածներում:	Ընդունվել է	Ընդունվել է

		Հոդվածներ 2, 3, 4, 5			
29.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է վերանայել նախագծի եզրափակիչ և անցումային դրույթները՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը բաշխելու վերաբերյալ հարաբերությունները կարգավորելու նպատակով: Բացի այդ, Նախագծում առաջարկվում է կատարել խմբագրական բնույթի փոփոխություններ, մասնավորապես՝ առաջարկվում է խմբագրել հոդվածների համարակալումները:	Ընդունվել է	Ընդունվել է

30.	Կառավարություն	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Նախագծից հանել 2-րդ հոդվածը և խմբագրել նախագծի անցումային դրույթները: Բացի այդ, նախագծով առաջարկվում է իրականացնել տեխնիկական բնույթի փոփոխություններ Նախագծի վերնագրում և հոդվածների համարակալումներում:	Ընդունվել է	Ընդունվել է
31.	Կառավարություն	«Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 1	Առաջարկվում է Նախագծից հանել 1-ին մասը՝ ««տարածվում» բառը փոխարինել «կիրառվում» բառով» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
32.	Կառավարություն	«Արդարադատության ակադեմիայի մասին»	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

		Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 2			
33.	Կառավարություն	«Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 4	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածը, որով լրացում է կատարվում «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքի 23-րդ հոդվածում, հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
34.	Կառավարություն	«Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության	Նախագծով առաջարկվում է վերանայել օրենքի անցումային դրույթները: Բացի այդ նախագծում կատարվել են խմբագրական բնույթի փոփոխություններ կապված նախագծի հոդվածներում	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենքում լրացումներ կատարելու մասին» Օրենքի նախագիծ հոդված 5	իրականացված փոփոխությունների հետ:		
35.	Կառավարություն	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղ եցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ հոդված 1	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով լրացում կատարել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածում: Մասնավորապես, առաջարկվում է 13-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-6-րդ մասերով:	Ընդունվել է	Ընդունվել է

36.	Կառավարություն	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղ եցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծից հանել 2-րդ հոդվածը, որով փոփոխություն էր նախատեսվում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի հավելված 1-ում:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	Կառավարություն	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղ եցնող անձանց վարձատրության	Առաջարկվում է Նախագծի անցումային դրույթներում ավելացնել 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը Կառավարություն է ներկայացնում առաջարկություն՝ Վճռաբեկ դատարանի դատավորների աշխատավարձի	Ընդունվել է	Ընդունվել է

		մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	բարձրացման վերաբերյալ՝ ներկայացնելով հակապատասխան հիմնավորում: Վճռաբեկ դատարանի դատավորների աշխատավարձերի տարբերակված բարձրացման առաջարկության դեպքում հիմնավորմամբ ներկայացվում են տարբերակման օբյեկտիվ հիմքը և իրավաչափ նպատակը:»: Բացի այդ, առաջարկվում է Նախագծում իրականացնել խմբագրական բնույթի փոփոխություններ կապված Նախագծի հոդվածներում առաջարկվող փոփոխությունների հետ:		
20.	Կառավարություն	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 1	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ. «1) 1-ին մասի «21-րդ և 22-րդ կետերով» բառերը փոխարինել «20-րդ և 21-րդ կետերով» բառերով»: Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածից հանել «վարույթն իրականացնող մարմին	Ընդունվել է	Ընդունվել է

			կայացրած դատական ակտի վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրություն.» բառերը, կատարել խմբագրական բնույթի փոփոխություններ:		
21.	Կառավարություն	«Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 1	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով «Դատախազության մասին» օրենքի 36-րդ հոդվածում լրացվող նոր 7.1-րդ մասում «սույն օրենքով սահմանված ստուգման ենթակա հանգամանքների հետ» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
22.	Կառավարություն	«Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասով «Դատախազության մասին» օրենքի 38-րդ հոդվածում լրացվող նոր 7.1-րդ մասում «սույն օրենքով սահմանված	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենքի նախագիծ հոդված 2	ստուգման ենթակա հանգամանքների հետ» բառերը հանել:		
23.	Կառավարություն	Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Նախագիծը լրացնել նոր՝ 4-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ «**Հոդված 4.** Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 9.1-ին կետ. «9.1) նա սույն օրենքի 50-րդ հոդվածի 15.1-ին մասով սահմանված ժամկետում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը չի ներկայացնում Որակավորման հանձնաժողով.»:	Ընդունվել է	Ընդունվել է
24.	Կառավարություն	Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածները փոփոխել՝ համապատասխանեցնելով Նախագծում առաջարկվող մյուս փոփոխություններին: Բացի այդ, Նախագծում իրականացվել են խմբագրական բնույթի փոփոխություններ, վերանայվել են հոդվածների համարակալումները:	Ընդունվել է	Ընդունվել է

25.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների և հարակից	Առաջարկվում է լրամշակել նախագծերի փաթեթի հիմնավորումը	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում			